


ՀԱՅԿԱԿԱՆ ԻՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

# ՄՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ

(ՀՕԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ)

ՊՐԱՎԻ 1



ՊԵՏԱԿԱՆ ԻՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1938

Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացե՛ք

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՎԼՈՎՐԱՆ 5 FEB 2010

34  
Մ-64 Կ

07 FEB 2010

# ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ

(ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ)

Գրականություն I

Կազմեց՝ Հ. Մեսրոպյան

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՎԼՈՎՐԱՆ  
ՏԵՐԵՎԱՆ — 1938

1.3 AUG 2013

32.992

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Սոցիալիստական իրավունքի հարցերին վերաբերող ժողովածուն ներկայացնում ե այն հոդվածների թարգմանությունը, վորոնք լույս են տեսել „Социалистическая Законность“ և „Советская Юстиция“ պարբերական-ներում ժողովրդի թշնամի, սրբիկ Պաշտուկանիսի և նրա արբանյակների արոց-կիստական-բռնիքարինական հականեղափոխական «թեորիայի» մարքսիստական քննադատության կազմակցությամբ:

Ժողովածուն նշանակված ե մեր իրավաբանական ֆակուլտետի ուսանողության և դատական—դատավագական այն աշխատողների համար, վորոնք ուսուերենին չտիրապետելու կամ բավարար չափով չտիրապետելու պատճառով հնարավորություն չունեն հետեւյալու այդ գրականության:

Ժողովածուն լրայ ե տեսնելու պրակներով, վորոնցից յուրաքանչյուրի մեջ հոդվածները դասավորվելու յեն վորոշ համաշափությամբ այն հաշվով, վորոպեսվի ուսանողը հնարավորություն ունենա միաժամանակ ծանոթանալու իրավունքի մի քանի բնագավառների (Պետական իրավունք, Քրեական իրավունք, Քաղաքացիական իրավունք, Աշխատանքային իրավունք) պրոբլեմներին:

Բացառություն ե կազմում սույն առաջին պրակը վորոն իրքի հետագա պրակների ներածություն, ամբողջովին նվիրված ե պետության և իրավունքի ընդհանուր տեսության:

ԿԱԶՄՈՂ

3080

38



ԸՆԴՀԵՄ ԽԱՐԱՍՉՈԹՈՒԹՅԱՆ, ԳՈԵՎԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ  
ՌԵՎԻԶԻՇԽՈՆԻՉՄԻ

Կարիք չկա ապացուցելու, թե այժմ ինչ նշանակություն ունի թեորետիկ աշխատանքը պետության և իրավունքի հարցերի բնագավառում։ Սահմանադրության նախագծի համաժողովրդական քննարկումը, Խորհուրդների Համամիութենական 8-րդ Արտակարգ Համագումարում ընկեր Ստալինի գեկուցումը և ԽՍՀՄ Սահմանադրության ընդունումը պետության և իրավունքի հարցերը զբեցին առաջնակարգ տեղերից մեկը։

Ստալինյան Սահմանադրությունը բացառիկ նշանակություն ունեցող վավերագիր և հանդիսանում նաև Պետության և իրավունքի ուսմունքի տեսական զարգացման համար։ Կոմունիզմի համար մղվող պայքարի պատմությունը գեռ չգիտե այնպիսի վավերագիր, վորտեղ այնպիսի խոր լրջությամբ և լրիվությամբ շարադրված լինելին սոցիալիստական պետության կառուցման սկզբունքները։

Բնական և, վոր իրավունքի և պետության թեորիայի բնագավառում աշխատող մարդիկ պետք և, առանձնապես այժմ, պրոպագանդիստներին ոգնություն ցույց տային, մշակելով ունանամատչելի գարճանելով մարքս-լենինյան ուսմունքը պետության և իրավունքի մասին սոցիալիզմի պայմաններում։ Սակայն յեթե ուշադիր կերպով աչքի անցկացնենք իրավունքի և պետության մասնագետների գրած աշխատությունները, անմիտարյուղակացության կհանգենք. թեորետիկ Փրոնտի իրավագիտական նախատամասը վաղուց ի վեր աղտոտված և հակամարքսիստական կեղծ գիտականությամբ, վորը նրանք ուժեղ կերպով վորպես մարքսիզմ են հրամցնում։

Իրավունքի բնագավառում իրավագետների շրջանում հիմնական տեսաբան և համարվում Յե. Պաշուկանիսը, ինչպես այս

մասին գրվում ե „Советское Государство“ ամսագրում, վորի խմբագիրը հենց ինքը Պաշուկանիսն ե («Պաշուկանիսը, իրավունքի խողորագույն տեսարաններից մեջ» տես № 3, 1936թ.):

Բայց, յերբ դիմում ենք այս «գլխավոր տեսարանի» գործերին, ապա ակներեւ ե գառնում, վոր հենց նա յել իրավունքի բնագավառում գուենկացման և խեղաթյուրումների «հիմնագիրն» ե հանդիսանում:

Ավելի քան մի տասնամյակի ընթացքում, — ներառյալ նաև վերջին ժամանակը, — իրավագետների շրջանում տիրապետող եյին (ասենք, այժմ ել զեռ տարբեր ձևերով յերեան են գալիս) հետեւյալ թեորիաները.

ա) մեր պետությունը սկսել ե մահանալ իր ծագման մունախից՝ 1917 թվից.

բ) մեր պետությունը պիտի մահանա յերկրորդ հնգամյակի վերջին.

գ) պետությունը և իրավունքը բուրժուական կատեղորիաներ են, և դրանք չեն կարող լեցվել սոցիալիստական բովանդակությամբ:

Յե. Պաշուկանիսի «Իրավունքի ընդհանուր տեսությունը և մարքսիզմը» գրքում, վորի վերջին հրատարակությունը լույս տեսավ 1929 թ., գրված ե.

«Այսպիսով, պետք ե նկատի ունենալ, վոր մորալը, իրավունքը և պետությունը բուրժուական հասարակության ձևեր են:

Յեթե պրոլետարիատը հարկադրված ե զրանցով ոգտվել ապա դա բոլորովին ել չի նշանակում, թե այս ձևերը կարող են հետագա զարգացում ունենալ՝ սոցիալիստական բովանդակությամբ լեցվելու ուղղությամբ: Նրանք անընդունակ են այս բովանդակությունը պարունակելու իրենց մեջ և պետք ե մահանան այդ բովանդակության իրացման չափով» (եջ 111):

Ինչպես տեսնում ենք, իրավունքը, պետությունը Յե. Պաշուկանիսի տեսակետից բուրժուական հասարակության ձևեր են և համատեղելի չեն սոցիալիզմի հետ:

Յերբ մերկացվեցին այս բացահայտ հակամարքսիստական թեորիաները, սկսվեց դրանք սքողված ձևով յուրորինակ «գիտեկտիկայի» քողարկման տակ անցկացնելու ժամանակաշրջանը: Այսպես, որինակ, իրավագետներից վոմանք հետեւյան եյին գըրում յերկրորդ հնգամյակում պրոլետարական գիտատուրայի զարգացման ուղիների մասին:

«Պետության մահացումը՝ դա տեսական պրոցես ե: Դա սկսվում ե պրոլետարական հեղափոխության առաջին որից, պրոլետարիատի կողմից իշխանությունը գրավելու առաջին որից...», և այնուհետև. «Հենց այս մարքսյան գիտեկտիկան պետք ե տեսնել այս պրօցեսի մեջ, վորը, մի կողմից պետության մահանաւում պրոցես ե հանդիսանում, իսկ մյուս կողմից՝ պրոլետարական գիտատուրայի հզոր ամրապնդման պրօցես ե հանդիսանում»: Վերջում տրվում ե այն յեղակացությունը, թե «ուրեմն յերկրորդ հնգամյակում պետության մահանալը կշարունակվի»:

Իսկ ավելի փոքր մասշտաբի «տեսաբանները» այս թեզիսն անհապաղ քաղաքական լեզվի եյին փոխադրում, և որինակ, Մ. Դոցենկոն զարգացնում եր համատարած կողեկտիվացման շրջաններում խորհուրդների մահացման «թեորիան»:

Խորհրդային պետությունն անհապաղ մահանալու հակամարքսիստական թեորիաները յերկար տարիների ընթացքում կազմել են վերոհիշյալ ամսագրի տեսական գծի հիմքը:

Բնորոշ ե, վոր Սահմանադրության մեջ փոփոխություններ մացնելու մասին Խորհուրդների 7-րդ Համագումարի վորոշմից (1935 թ. գիտրված) հետո մինչև 1936 թ. կերպ, յերբ մեր ամբողջ պարբերական մամուլն զրադված եր Սահմանադրության հարցերով, „Советское государство“ ամսագրը միանդամյն անտեսում և պետության և իրավունքի հարցերը սոցիալիզմի պայմաններում: Յեթ միայն 1936 թվի հունիսից սկսած ամսագրում մի քանի հոդվածներ (այն ել խճողված) են լույս տեսնում այս թեմաների շուրջը:

Այն ժամանակ, յերբ մեր մամուլը քննարկում եր սոցիալիստական պետության և իրավունքի կարևորագույն հարցերը, „Советское государство“ ամսագրը զրադվում եր մի շարք ուղղվածիստական թեորիաների «մշակմամբ» և պաշտպանմամբ: Այսպես, որինակ, այս ամսագրի հոկտեմբերյան համարում (1936 թ.), կարենայի հոդվածում պաշտպանվում ե պրոլետարիատի գիտատուրան և գիտեկտիկան իրար հակադրելու բացահայտ կառցկիտական թեորիան: Կարևոն պնդում ե, թե «պրոլետարական գիտատուրայի գաղափարն ավելի լայն ե, քան պրոլետարական գիտեկտիկաների» գաղափարը: Այսպես, պրոլետարական գիտատուրայի բունի կողմը, շահագործողների ճնշումը հանդիսանում է պրոլետարական գիտատիւրայի անհրաժեշտ նախադրյալը, բայց վոչ յերբեք նրա հյությունը (եջ 144):

Յուրաքանչյուր վոք գիտե, վոր կարևայի այս պնդումը հակառակ ե պրոլետարիատի դիկտատուրայի և դեմոկրատիայի մասին լենինի և Ստալինի ուսմունքին: Լենինը գրում եր. «Խորհրդային հասարակարգը դեմոկրատիզմի մաքսիմումն ե բանվորների ու գյուղացիների համար և նա միմնույն ժամանակ նշանակում ե—խզում բարձրութական դեմոկրատիզմի հետ և ծագում նոր, համաշխարհային պատմական տիպի դեմոկրատիայի, այսինքն պրոլետարական դեմոկրատիզմի կամ պրոլետարիատի դիկտատուրայի»: Այս նույն խնդրի մասին ընկեր Ստալինը գրում ե. «Պրոլետարիատի դիկտատուրան դեմոկրատիայի բարձրագույն տիպն ե...»: Կարելի յե լենինի և Ստալինի բազմաթիվ արտահայտուները բերել այս նյութի մասին,—գրանք գիտի ամեն վոք, ով ուսումնասիրում ե լենինիզմը: Բայց, ինչպես յերևում ե, իրավունքի և պետության բնագավառի «մասնագետները» գործ չունեն լենինիզմի հետ...

Ահա թեորետիկ այսպիսի մի բնորով „Советское государство“ ամսագիրը մտնում ե 1936 թիվը: Այս տարվա ընթացքում ամսագրի համար բնորոշ եր հետեւյալը. մի կողմից՝ հին սփալաների կիսաընդունումը և պաշտպանությունը, մյուս կողմից՝ նորերի կուտակումը:

Ամսագրի № 3-ում, Պաշտևանիսի հոդվածում, փորձ ե արվում հին հակամարքսիստական թեորիաներն այն բանով արդարացնել, թե առաջ չեր կարելի սոցիալիստական իրավունքի մշակմամբ զբաղվել, քանի վոր իրը թե այն ժամանակ հին արտադրական հարաբերությունների հեղաբեկում եր տեղի ունենում:

«1930 թին, —գրում եր Պաշտևանիսը, —խորհրդային սոցիալիստական իրավունքի ավելի կամ պակաս ավարտված սխալեմ տալու փորձը չեր կարող հաջողությամբ պսակվել, քանի վոր զա հին արտադրական հարաբերությունների առավելագույն հեղափոխական բեկման ժամանակաշրջան եր» (եջ 9): Այս կերպ հիմք ե ստեղծվում իրավունքը տեսաբանների նախկին կոպիտ սխաները «որյեկտիվ պայմաններով» արդարացնելու համար:

Նույն այդ № 3-ում տպված ե Մ. Դոցենկոյի հոդվածը, այն մարդու, վորն իր ժամանակին խորհուրդների մահացում եր քարոզում համատարած կոլեկտիվացման շրջաններում: Դոցենկոյի հոդվածը—հակալենինյան թեորիաների փունջ ե: Հայտնի յե, վոր աջերն ու տրոցկիստները կոլեկտիվացման հարցերում կուսակցության գծի դեմ պայքարի ընթացքում այնպիսի մի տե-

սություն ստեղծեցին, վոր իրը թե կարիք չկա համատարած կոլեկտիվացման լողունք հոչակելու, քանի վոր կուսակցությունը կուլակության սահմանափակման քաղաքականությունից վաղուց արդեն անցել ե նրան դուրս քերլու քաղաքականության: Ինչպես հայտնի յե, այս թեորիայով հանդես յեկավ հականեղափոխական Ռյուտինը:

Ընկեր Ստալինն այն ժամանակ հասուկ հոդվածում պարզաբնեց, վոր կուլակության դուրս քշման քաղաքականությունը, —գրանք միենույն քաղաքականությունն են: Իսկ Մ. Դոցենկոն 1936 թվին „Советское государство“ ամսագրի եջերում հարություն ե տալիս ոյուտինյան թեորիային: Նա գրում ե. «Տնտեսության վերականգնման և գյուղում բազմամիլիոն անհատական տնտեսությունների առկայության պայմաններում թույլատրելով վորպես անհրաժեշտություն կապիտալիստական տարրերի վերածնումը և նրանց գործունեյությունը, խորհրդային իրավունքն այս ժամանակաշրջանում կապիտալիստական տարրերի սահմանափակման, իսկ հետագայում—նրանց դուրս քշման գինը եր հանդիսանում» (եջ 34):

Նույն հոդվածի մի այլ տեղում Դոցենկոն հարություն ե տալիս բուրժուական իրավունքը սոցիալիզմի մեջ ներածելու հակամարքսիստական թեորիային: Նա գրում ե. «Ճիշտ նույնպես ել սկզբունքորեն փոխում են իրենց բնույթը և խորհրդային սոցիալիստական իրավունքը նոր սիստեմի բաղկացուցիչ, որդանական մասն են դառնում նաև բուրժուական իրավունքի ամեն տեսակ ինստիտուտներն ու կատեգորիաները» (եջ 36):

Բուրժուական իրավունքը սոցիալիզմի մեջ ներածելու թեորիան վոչ այլ ինչ ե, յեթե վոչ բուրժուական պիտույքությունը սոցիալիզմի մեջ ներածելու թեորիա: Ինչպես, անզամ վոչ իրավագութեաներին, հայտնի յե, իրավունքը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ տիրապետող դասակարգի կամքի ակտիվ արտահայտությունը, վոր դրի յե առնված պետության որենքներում: Իրավունքն առանց պետության գոյություն չունի:

Բուրժուական իրավունքը, նրա ինստիտուտներն ու կատեգորիաները սրբազործում են շահագործման իրավունքը, արտադրական գործիքների և միջոցների մասնավոր-սեփականության իրավունքը:

Ֆրիզրիխ Ենգելալը դեռ «Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում» գրքում գրում եր. «Որենքը սուրբ ե բուրժուայի

համար, վորովնետե դա—նրա սեփական ստեղծածն ե, հրատարակված և նրա համաձայնությամբ և նրա որդի համար, և նրա պաշտպանության համար։ Բուրժուան զիտի, վոր յեթե առանձին վորեկ որենք նրան վաս ել հասցնելու լինի, բայց և այնպես որենքների ամբողջ կառուցվածքը պաշտպանում և նրա շահերը, գեռ ավելին, այն որենքի սրբությունը, այն կարգի սրբությունը, վորը հաստատված և մի մասի ակտիվ կամքով և վորը պասիվ կերպով ընդունվում ե մյուս մասի կողմից, բուրժուաղիայի սուցիալական դրության ամենառողղակի հենարանն են»։

Բանվոր գասակարդը պրոլիտարական հեղափոխության ընթացքում խորտակում և բուրժուաղիայի պետական մեքենան։ Նրա հետ միասին նա խորտակում և բուրժուական իրավունքի ինստիտուտների և կատեգորիաների ամբողջ սիստեմը, վորպես բուրժուական պետության անկապտելի արքիքուալը։

Իրավագետների շրջանում շատ ուժեղ կերպով տիրապետում և իրավաբանական կրետինիզմի աստիճանին հասցրած իրավաբանական տրամաբանությունը։ Նրանք սկզբունքային հարցերի մասին միայն նեղ իրավագիտական տեսակետով են դատում, ըստ վորում իրավական նորմաները նրանց համար գոյություն ունեն ինքնըստինքյան։ Նրանց դատողությունների տրամաբանությունը մոտավորապես հետեւյան ե։—Բուրժուական հասարակության մեջ գոյություն ունեն առևտրական և պայմանագրային հարաբերություններ տնտեսական ձեռնարկությունների միջև։ ԽՍՀՄ մեջ ել տնտեսական ձեռնարկությունների միջև գոյություն ունեն առևտրական ու պայմանագրային հարաբերություններ, ապա ուրեմն դա բուրժուական իրավունք ե, վորն անցել և սոցիալիստական իրավունքի մեջ, բայց, ինարկե, փոխել և իր բովանդակությունը։

«Советское государство» ամսագրի 1936 թվի վերջին համարը նվիրված է ԽՍՀՄ Սահմանադրությունն ընդունելու հարցերին։

Ամենից առաջ զարմացնում ե խմբագրության վարմունքի վորոշ առարինակությունը։ Զի տպագրված ընկեր Ստալինի զեկուցումը Սահմանադրության մասին, այլ զեկուցման փոխարքն զետեղված ե Յե։ Պաշտուկանիսի հապճեպ գրած հոդվածը։

Հենինիզմի կոպիտ խեղաթյուրում ե հանդիսանում Ն. Ալեքսանդրովի «Ստալինյան Սահմանադրության ն սոցիալիստական հասարակության աշխատանքային իրավունքը» հոդվածը։ Սոցիալիստական հասարակության աշխատանքային իրավունքը սոցիա-

լիզմի մեծ նվաճումն ե, և մեր յերկրի յուրաքանչյուր քաղաքացի հաղարտանում և այս նվաճմամբ։

Աշխատանքի իրավունքը—դա ԽՍՀՄ բոլոր քաղաքացիների իրավունքն ե։

ԽՍՀՄ բոլոր քաղաքացիների աշխատանքի իրավական կարգավորման հիմնական սկզբունքը հետեւյալ սկզբունքն ե։ յուրաքանչյուրից—ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրին—ըստ նրա աշխատանքի։ Բոլորի համար պարզ ե, վոր խորհրդային իրավունքի այս սկզբունքը կիրառելի յե և կիրառվում է ամենուրեք՝ ֆաբրիկայում, գործարանում և կոլտնտեսության մեջ։

Սակայն այսպիսի կարծիքի չեն իրավունքի բնագավառի մասնագետներից վոմանք։ Նրանք բոլոր հարցերի վերաբերմամբ իրենց իրավաբանական մոտեցումն ունեն։ Ալեքսանդրովի հոգվածում իրավաբանական կրետինիզմը հերկուելայան սյուներին և հասնում է հոգվածը բացահայտ հակակուսակցական ընույթ և կրում։ Աշխատանքի իրավական կարգավորման սոցիալիստական սկզբունքը Ն. Ալեքսանդրովի միայն բանվորների ու ծառայողների վրա յե տարածում։ աշխատանքային իրավունքի վայրտից նույնականացնելու բացասում ե կոլտնտեսականներին։

Ահա Ալեքսանդրովի մի շարք հիմնական դրույթները. «Կոլտնտեսություններում և կոռպերատիվ միավորումներում աշխատանքային իրավունքը տարածվում և միայն բանվորների և ծառայողների վրա, այսինքն այն աշխատողների վրա, վորոնք կոլտնտեսության (կոռպերատիվ միավորման) անդամ չեն և հետեւյապես չեն մասնակցում տվյալ կոլտնտեսության յեկամոււն ըստ աշխատերի բաշխման» (եջ 61): «Սոցիալիստական հասարակության աշխատանքային իրավունքն ընդգրկվում ե բանվորների և ծառայողների և ծառայողների աշխատանքային սոցիալիստական կոզմակերպումը» (եջ 62): «Սոցիալիստական հասարակության աշխատանքային իրավունքը ծառայողների աշխատանքային սոցիալիստական կոզմակերպումը» (եջ 63): «Սոցիալիստական հասարակության աշխատանքային իրավունքը ծառայողների միջաց բանվորների և ծառայողների նկատմամբ» (եջ 64):

Այս «թեորետիկ» գրույթներից հետո հեղինակը հոգված առ հոգված քննում և Սահմանադրության 10-րդ գլուխը վորը մեկնաբանում է ԽՍՀՄ քաղաքացիների հիմնական իրավունքները։ Քաղաքացիների այդ բոլոր իրավունքները հեղինակը բացառապես բանվորների և ծառայողների վրա յե տարածում։ Լենինիզմի խեղա-

Թյուրումների տրադիցիաների մեջ արմատակալած ամսագիրը  
միայն կարող եր այսպիսի հոգված տալ:

Միանգամայն ակներեւ ե, վոր “Совет. гос.“ ամսագիրը  
լենինիզմի մի շաբք կարեռագույն խնդիրներում կանգնած եր ու  
կանգնած ե խորթ դիրքերի վրա: Անհջաժեշտ ե վճռականապես  
ջախջախել այդ տրադիցիաները, անհրաժեշտ ե ամսագիրը դեպի  
մարդու լենինյան մարտական դիրքերը շուռ տալ:

Տպագրված ե „Советская Юстиция“ ամսագրի 1937թ. № 5-ում:

---

#### Պ. ՅՈՒԴԻՆ

#### ՍՈՑԻԱԼԻԶՄ ՅԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Իրավունքն, իրեւ մարդկանց գույքային հարաբերությունների կարգավորման գործիք, ծագում ե պետության հետ միաժամանակ, հասարակության պատմական զարգացման այն աստիճանի վրա, յերբ հանդես ե գալիս մասնավոր սեփականությունը, հետևաբար, նաև հասարակության բաժանումն ըստ դասակարգերի:

Գետությունն,—ինչպես ուսուցանում ե մարդուկանը,—զարգացման վորոշ աստիճանի վրա գտնվող հասարակության արդյունք ե: Նա (պետությունը) ծագել ե այն բանի հետևանքով, վոր հասարակությունը տրոհվել ե հակամարտ գասակարգերի, վորոնց շահերը հաշտեցնել անկարելի յի: Ենդեմալ ցույց ե տալիս, թե, վորպեսզի հակադիր տնտեսական շահեր ունեցող դասակարգերը միմիանց չխժուն ատլարդյուն կովի մեջ, պահանջ ըդգացվեց մի ուժի, վորոն, ըստ յերեսութիւն, կանգնած լիներ հասարակությունից բարձր և «կարգ»-ի սահմաններում պահեր թշնամանող ուժերը:

Ճիշտ նույնպես և պետության հետ միասին ծագող (և պետության ստեղծած) իրավունքը—հետևանքը և անհաշտելի դասակարգային հակասությունների: Իրավունքը ծագում ե իրեւ մի գործիք, վորով մեկ դասակարգ ճնշում ե մյուսին և վորը նպատակ ունի ճնշված դասակարգերը պահելու տիրող դասակարգերի ստեղծած «կարգ»-ի սահմաններում:

Իրավունքը միշտ ել յեզել ե դասակարգային. նա միշտ ել վավերացրել և պաշտպանել ե տնտեսապես և քաղաքականապես տիրող դասակարգերի շահերը: Կապիտալիստական հասարակության մեջ իրավունքը իրեւ քաղաքական վերնաշնքը հասավ իր առավելագույն զարգացման և ընդունեց ֆետիշի ընույթ. նա բարձրացավ իշխանության գերմարդկային աղբյուրի աստիճանի: Իրավունքը սրբազործում ե մասնավոր սեփականությունը, շահագործումը. նա սրբագործում ե բուրժուական հասարակության

Այսնքի ամբողջ իրակարգը, իրեւ մի իրակարգ, վորն, իր թե, գերազանցապես համապատասխանում և մարդու ընության:

Իրավունքն, իրեւ գույքային հարաբերությունների արտահայտություն դասակարգային հասարակության մեջ, անմիջականորեն կապված և արտադրության միջոցների մասնավոր սեփանության հետ: Այստեղից ել մարդու իրավաբանական իրավունքները ներկայացնում են նրա սեփականատիրության իրավունքները: Իրավունքի մյուս բոլոր ձևերը վոչ այլ ինչ են, յեթե վոչ մարդկանց սեփականատիրության իրավունքի արտահայտության լոկ տարբեր ձևեր:

Իրավունքի այս եյությունը, նրա, թերեւ, ամենաընդհանուր և ամենաճշգրիտ ձևով, արտահայտել են Հեղելը: «Իրավունքի փիլսոփայությունը» իր աշխատության մեջ նա գրում եր՝ «Իրավունքը, նախ և առաջ, անմիջական առկա գոյություն են, վորն իրեն ազատություն և տալիս անմիջական ձևով.

ա) Նա—տիրություն ե, վորը սեփականություն ե...

բ) Անհատը, տարբերելով իրեն իրենից, դրանով իսկ վերաբերում և վորմեա այլ անհատին, ըստ վորում յերկումն ել միմյանց համար առկա գոյություն ունեն հենց միայն իրեւ սեփականատերեր<sup>1</sup>...

Հեղելը շատ լավ եր հասկանում իրավունքի ձևերի պատմական բնույթը.

«...Որենքները դրական են այն չափով, վորչափով նրանց նշանակությունը և նպատականարմարությունն արմատավորված են հանդամանքների մեջ, վորչափ, հետևաբար, նրանք առհասարակ միայն պատմական արժեք ունեն, այդ պատճառով նրանք ժամանակավոր, անցողական բնույթ են կրում»<sup>2</sup>:

Բայց դրա հետ միասին Հեղելն ընդունում եր, վոր իրավունքի ձևերի մեջը մյուսի հաջորդական փոխարինումը հնարավոր և միայն իրեւ նրանց ել ավելի կատարելագործում, վորը կատարվում և մասնավոր սեփականության կարիքներին համապատասխան:

Պատմականորեն քննարկելով սեփականության հարցը, Հեղելը գրում ե.

«Մասնավոր սեփականությունը, իրեւ ավելի բանական մոմենտ, պետք են հաղթանակեր, թեկուղ և ի վես այլ իրավունքի»<sup>3</sup>:

Հեղելն, առհասարակ, թույլ չի տալիս յենթագրել անդամ, թե մասնավոր սեփականությունը կարող ե իր տեղը զիջել հանրային սեփականության:

«Մարդկանց այնպիսի բարեպաշտ կամ բարեկամական,—այլև մինչև անդամ բնուի յեղբայրության միության գաղափարը, վորտեղ գոյություն ունենա գույքի ընդհանությունը, և վորտեղից վտարված լինի մասնավոր սեփականության սկզբունքը, այդպիսի գաղափարը կարող ե չափազանց ընդունելի թվականության մեջ մասնականության, վորը չի հասկանում վոգու և իրավունքի ազգայության բնույթը և այդ վոգին ու իրավունքը չի ըմբռնում նրանց վորոշ մոմենտներին»<sup>4</sup>:

Բուրժուական իրակարգի հետագա բոլոր իդեոլոգները—այսպիս թե այնպես—միայն մեկնարանում ելին այս գաղափարները:

Բուրժուական ապրանքային հասարակության ֆետիշիզմն իր ցայտուն արտահայտությունը գտագի իրավական հարաբերությունների մեջ: Ենգելսն իր «Անտի-Դյուրիխնդ»-ի մեջ գրում ե, վոր կապիտալիստական արտադրության անարիխիայի հետեւագով հասարակական կարգերը հանդես են գալիս իրեւ յերկնային շնորհ, վորը վերից պարզեած է մարդկանց:

Իրավունքի կապը տնտեսական հարաբերությունների հետ, կարծեք, կորչում ե, և իրավական հարաբերությունները հանդես են գալիս ինքնուրույն կերպով:

«Պետական և մասնավոր իրավունքը գիտվում են իրեւ ինքնուրույն բնագավառներ, վորոնք ունեն իրենց առանձին անկախ զարգացումը և պետք ե ու կարող են յենթարկվել ինքնուրույն սիստեմատիկ մշակման բոլոր ներքին հակասությունների հետեւղական վերացման միջոցով»<sup>5</sup>:

Իրավաբանական ձևը սկսում է դիտվել իրեւ գլխավորն ու հիմնականը, իսկ տնտեսական բովանդակությունը—իրեւ երկրորդականը և իրավաբանական ձևի ածանցյալը:

Բուրժուական իրավունքի գիտիզմն այն աստիճանի գերության մեջ է պահում բուրժուական և սոցիալ-գեմոկրատական իրավաբաններին, վոր ամբողջ պետական իրակարգը նրանց սկսում և պատկերանալ իրեւ զուտ իրավական մի հորինվածք, իրեւ իրավունքի վորոշ ձևերի ազգեցության մի արգասիք: Պետական

<sup>1</sup> Եղելն, „Փիլիսօփիա պարագաների մասին“ առաջնային գործընթացում:

<sup>2</sup> Փ. Թիգելս. „Լյուդվիգ Ֆեյերբախ“ стр. 52. Партиздат ЦК ВКП (б) 1934.

կառուցվածքի տնտեսական և գասակարգային հիմունքներն, այդ իրավաբանների կարծիքով, իրենք ներկայացնում են վորոշ իրավական կարգի հետևանքը:

Իրավունքի ամենակարողության, սրբության և նրա գերհասարակային բնության պատրանքներն առանձնապես ծաղկում են բուրժուական դեմոկրատիայի զարգացման տարիներին:

Թե վորքան ուժեղ և բուրժուական իրավունքի ֆետիշիզմը, այդ ցույց են տալիս սոցիալ-դեմոկրատիայի տեսաբանները՝ կառուցկին, կունովը և ուրիշները:

Կառուցկին, վոր այնքան շատ և գրել պետության և իրավունքի մասին, յերբեք չի կարողացել բարձրանալ մինչև բուրժուական իրավունքի և բուրժուական պետության հետեւղական քննադատությունը նրանց ամբողջական առումով:

Դեռ ավելին, բուրժուական հասարակության իրավակարգը նրա համար միշտ ել յեղել և մի փաստ, վորն անկարելի յե վերացնել բռնի կերպով. պրոլետարիատն իր կովի ընթացքում չի կարող խախտել անդամ գոյություն ունեցող բուրժուական կարգերը:

Այստեղից ել առաջ և գալիս բուրժուական որինականության շրջանակներից գուրս գալու նրա մշտական յերկյուղը: Բուրժուական պետական-իրավական սիստեմի հանդեպ ցուցաբերած իր խոնարհության մեջ Կառուցկին վերջին ժամանակ այն տեղը հասավ, վոր, որինակ, Ազգերի Լիգան նա սկսեց համարել իբրև այն միջադրային կազմակերպությունը, վորն ապահովելու յե կապիտալիզմից սոցիալիզմին անցումը և նույնիսկ պնդումը եր, վոր Ազգերի Լիգան արգեն իսկ իրագործում և այդ անցումը<sup>1</sup>:

Կունովի համար իրավունքի հիմքը ներկայացնում և վոչ թե հին տնտեսական արտադրական հարաբերությունների և սրանց համապատասխան իրավական հարաբերությունների վերացումը, այլ հին իրավունքը, վորից աճում և նորը. «Սոցիալական զարգացման պրոցեսում իրավունքը միշտ ել յե նթագործում և ավելի

<sup>1</sup> «Ազգերի Լիգայի ժամանակակից կազմակերպությունը չի ներկայացնում, ինարկե, նրա վերջնական կազմակերպումը Զի կարելի նախահետեւ թե ինչպես կկազմակերպի նրա պատմությունը: Մի բան միայն անկասկած ե. Ազգերի Լիգան, անպայման, անհրաժեշտ և վոչ միայն սազմական վահանգները կանխելու համար, այլև այն նոր հասարակությունը կառուցելու համար, վորը պետք ե փոխարինի կապիտալիստական հասարակությանը»: (Կ. Կայտսկի և Մатериалистическое понимание истории. Т. II стр. 610).

հին իրավունքը նախնական գոյությունը և վորոշ չափով աճում և այդ հին իրավունքից»: («Марксова теория исторического процесса общества и государства». Т. II, стр. 169. 1930).

Կապիտալիստական ռեստավրացիայի յերգիչ Ն. Բուխարինը կազմակերպված կապիտալիզմի և բուրժուական-կուլտակային իրակարգը՝ սոցիալիզմին ներածելու իր «աեսությունների» մեջ յեւնում և բուրժուական պետական-իրավական կարգի նույն այդ ֆետիշացումից: Բուխարինը չի կարող թույլ տալ իրեն մտածել անգամ այն մասին, վորպեսզի ջախջախվի հին բուրժուական իրակարին, այդ իրակարգի ամբողջ իրավական սիստեմը և նրա վոխարին ստեղծվի իրավունքի նոր, սոցիալիստական սիստեմ:

Պետության «պայմենացման» և պետության կատարյալ ժրխտման նրա անարխիստական տեսությունները ներկայացնում են բուրժուական իրավունքի ֆետիշիզմի միայն հակառակ կողմը:

Թե վորքան ուժեղ և կապիտալիզմի պաշտպանների յերկուուղած խոնարհությունը բուրժուական իրավունքի առաջ, թե վորքան ուժեղ և բուրժուական իրավունքի հավիտենականության և անզրգվելիության վերաբերմամբ նրանց ունեցած հավատը, կարելի յե դատել և այն բանի հիման վրա, թե ինչպես վոչ անհայտ Պաշտոկանիսի շլուկայից գուրս յեկած սոցիալիզմի թշնամիները յերկար տարիների ընթացքում համառությամբ ապացուցում են, թե չկա և չի կարող լինել մի այլ իրավունք, քան բուրժուականը և վոր մեր խորհրդային իրավունքը նույնպես բուրժուական իրավունք և, միայն նոր պայմաններում կիրառված:

\* \* \*

Մարքս-Լենինյան՝ իրավունքի և պետության ուսմունքը յելնում և այն գրույթից, վոր պետությունը ներկայացնում է դասակարգային տիրապետության որգան, մի դասակարգ մյուս դասակարգի կողմից ձնշելու որգան:

«Համար Մարքսի, պետությունը դասակարգային տիրապետության որգան, մի որգան, վորով մի դասակարգ ձնշում և մյուսին, ստեղծումն՝ մի «կարգի», վորն որինականացնում և ամրապնդում և այդ ձնշումը, չափավորելով դասակարգերի ընդհարումը»<sup>1</sup>:

<sup>1</sup> Լենին, «Գետություն և հեղափոխություն»: Հայկուսհրատ. 1933 հջ. 7.



Իրավունքն այն նորմաների սիստեմն ե, վորը սահմանում է պետությունը հասարակական կառուցվածքի գոյություն ունեցող կարգի պաշտպանության համար։ Իրավունքը—դա տիրող դասակարգի ակտիվորեն արտահայտած կամքն ե, վորը սբբազործում և հավերժացնում ե տիրող դասակարգի անտեսական և քաղաքական շահերը։

Բուրժուական հասարակության մեջ ըրլոր որենքներն իրենց ամբողջությամբ ներկայացնում են իրավական մի ինստիտուտ, վորը պաշտպանում և բուրժուազիայի շահերը և ուղղված ե բանվոր դասակարգի շահերի դեմ։

«...Բուրժուազիայի համար որենքը սուրբ ե. չե վոր այդ նրա սեփական ուժի արգասիքն ե, նրա համաձայնությամբ և նրա պաշտպանության ու շահի համար և հրատարակված։ Նա շատ լավ գիտե, վոր յեթե նույնիսկ վորեւ առանձնակի որենք մասնավորապես նրան վնասում ե, սակայն որենսդրությունն իր ամբողջությամբ վերցրած նրա շահերի պաշտպանության կողմն ե ուղղված։ Նա ամենից առաջ գիտե, վոր որենքի սրբությունը, կարգի անձեռնմխելիությունը, վորը սահմանվել և հասարակության մի մասի կամքի ակտիվ արտահայտությամբ և մյուսի՝ պասիվ վերաբերմունքով, նրա սոցիալական դրության ամրագույն հենարանն ե... Բանվորը չափաղնց լավ գիտե և չափաղնց հաճախ փորձով իմացել ե, վոր որենքն այն մտրակն ե, վորը բուրժուան նրա համար հյուսել ե, և դրա համար ել որենքի հետ նա գործ ե ունենում միայն այն ժամանակ, յերբ հարկադրում են նրան այդ բանին»<sup>1</sup>։

Մարքսիզմ-Լենինիզմի կլասիկ գրականության մեջ պետության և իրավունքի ուսմունքին նվիրված են մի շարք աշխատություններ. Մարքսի և Ենգելսի աշխատությունները. «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», «Լուի-Բոնապարտի Բյուլենի տասն և ութը», «Կապիտալ»-ի մի շարք գլուխներ, «Լյուդվիգ Ֆեյերբախը», «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում 1871 թվին», «Դոթայի ծրագրի քննադատությունը», «Սնակ-Դյուրինգը» և այլն, Լենինի աշխատությունները՝ «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ի՞նչպես են նրանք կովում սույնաւորությունների դեմ», «Սոցիալ-դեմոկրատիայի ազբարա-

<sup>1</sup> Ֆ. Ենգելս «Բանվոր դասակարգի դրությունն Անդիայում»: Հայկական հրատ. 1934 թ. եջ 354.

յին ծրագրութը 1905—7 թ. Յ. առաջին սուսական հեղափոխության մեջ», «Յերկու տակարիկու», «Էմանուալիզմը իբրև կապիտալիզմի բարձրագույն ստագիա», «Պետությունը և հեղափոխությունը», «Զախության մանկական հիմնությունը կոմունիզմի մեջ», «Պրոլետարական հեղափոխությունը և ունեցած կառցիկին» և այլն. Ստալինի աշխատությունները՝ «Մարքսիզմը և աղքային-դադությային հարցը», «Լենինիզմի հարցերը» և այլն:

Լենինի «Պետությունը և հեղափոխությունը» հոչակավոր աշխատությունը տալիս է պետության վերաբերյալ մարքսիզմի ամբողջ ուսմունքի և բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի համաշխարհային ամբողջ փորձի ընդհանրացումը «Պետությունը և հեղափոխությունը» ներկայացնում է պետության և իրավունքի վերաբերյալ Մարքս-Լենինյան ուսմունքի խսկական հանրագիտարան, տեսական իմաստության և սոցիալիզմի համար մղլող պայքարի գործնական դեկավարության խսկական անսպառ աղբյուր։

«Պետության և հեղափոխության» մեջ Լենինը սպանիչ քննադատության և յենթարկում հակամարքսիստական տեսակետները և պետության բնության ամեն կարգի խեղաթյուրում-ները։

Լենինը վերականգնեց Մարքսի և Ենգելսի հայացքները պետության և հեղափոխության վերաբերյալ մաքրեց այդ հայացքներն այն աղճատումներից և խեղաթյուրումներից, վորոնց նրանք յենթարկեցին և ինտերնացիոնալում, մամնավորապես կարլ կառուցկու կողմից։ Ել ավելի զարգացրեց կոմունիզմի հիմնավորների հայացքներն ամբողջ պատմության հարստագույն փորձի հիման վրա, առանձնապես պրոլետարիատի պայքարի փորձի հիման վրա իմպերիալիզմի զարաշրջանում։

Լենինը, Մարքսի նման, մասսայական շարժման փորձից երս սպասում պրոլետարական հեղափոխության արմատական հարցերի պատասխանը: Մարքսի նման նա բացառիկ խնամքով ուսումնասիրում եր մասսաների հեղափոխական փորձը, և, յենելով դըրանից, անում եր ին յեղակացությունները։ Յերկու հեղափոխությունների մասսայական փորձի հիման վրա՝ Լենինը, ի դեմս խորհուրդների, հայտնաբերեց պրոլետարիատի ղեկտատուրայի պետական ձևը։

Վերջին ժամանակ մեր պարբերության դրականության մեջ աշխատանք և տարվում մերկացները Պաշտուկանսի և ընկ. մասսարարական տրոցկիստական-բռուխարինական տեսությունները:

Սակայն այդ մերկացումները մեծ մասամբ մնում են վորպես մակերեսային, իսկ յերբեմն ել, բացահայտելով թշնամական հայցքները մասնակի հարցերում, հիմնական խնդիրներում պաշտպանում են սխալ գիրքավորումներ:

«Պետություն և հեղափոխություն» և լենինյան այլ աշխատությունները և ընկեր Ստալինի աշխատությունները, առանձնապես նրա զեկուցումը Սահմանադրության մասին Խորհուրդների VIII Համամիութենական Արտակարգ համագումարում, ԽՍՀ Միության Սահմանադրությունը և ընտրական որենքն՝ այն մեծագույն վավերագրերն են, վորոնք տալիս են խորհրդային պետության և իրավունքի բնության հարցի ճիշտ լուծումը:

Անհրաժեշտ և ամուր կերպով հիշել մարքսիստական այն ճշմարտությունը, վոր իրավունքը ստեղծվում և պիտության միջոցով, վոր իրավունքն ինքը կազմում և ամրող պետական քաղաքական սխառեմի անկատելի և միևնույն ժամանակ եյական մասը:

Հանգիսանալով տիրող դաստկարգի ձեռքին իրեկ դործիք, պետությունը ստեղծում և իր իրավունքը, վորը պահպանում և հենց այդ դաստկարգի շահերը:

Պետությունից անկախ գոյություն չունի իրավունքը, «վորովինեակ իրավունքը վոչինչ և առանց այն ապարատի, վորը կարող է առ կագը և այդ իրավունքի նորմաները կատարելու»<sup>1</sup>.

Մարքս-լենինյան պետության ուսմունքը միևնույն ժամանակ և իրավունքի ուսմունք է:

Իրավունքն իր կոնկրետ արտահայտությամբ ներկայացնում և պետության կողմից հրատարակված և հրատարակվող որենքների ամրող լություն:

Բավական և մետափիզիկ չլինել, վորպեսզի հեշտությամբ հասկանանք, վոր իրավունքն, ամբողջությամբ վեցրած, պարունակում և իր մեջ պետական իրավունքը, ընտանեկան իրավունքը, քրեական

<sup>1</sup> Է են ին. «Պետություն և հեղափոխություն»: Հայկուսիրատ. 1934թ. հջ 85:

իրավունքը, հողային իրավունքը, աշխատանքային իրավունքը և այլն:

Իրավունքի այս բոլոր առանձին ճյուղերը կամ բնագավառաները պետական, այսինքն հարկադրական, կարգով կարգավորում և ակտիվորեն պաշտպանում են վորոշ կարգ և կյանքի կազմ, մարդկանց վիստադաբճ գույքային հարաբերությունների վորոշ բնույթ:

Իսկ իրավունքի ընդհանուր տեսությունն ուսուցանում է, թե ինչպի և պայմանավորվում իրավական հարաբերությունների այս կամ այն կազմը, ինչ և ներկայացնում իրավունքի այս կամ այն բնագավառի տեսակարար կշիռը, կախման և պայմանավորման այն վիճակի բնույթը, վորի մեջ նա գտնվում և տնտեսական հարաբերությունների հանդեպ («իրավունքը յերբեք չի կարող լինել ավելի բարձր, քան անտեսական կազմը և այդ կազմով պայմանավորվող հասարակության կուլտուրական զարգացումը» — Մարքս), ինչպիս նաև ընդհանուր առմամբ հասարակության պետական կառուցվածքի հանդեպ:

Առհասարակ անկարելի յև պատկերացնել իրավունքի ուսմունքի շարադրանքն անկախ պետության ուսմունքից:

Բուրժուական իրավաբանները շատ լավ եյին հասկանում այդ: Պատահական չե, վոր բուրժուական, իրավաբանությունը պետական իրավունքի իր ստեղծած տեսության մեջ շարադրում և պետության և նրա գերիշխանության (սուվերենիտեսի) ուսմունքի հիմունքները: Իրավունքի փիլիոփայությունը ևս, նրա կլասիկ բուրժուական ըմբռնումով, վոչ այլ ինչ ե, յեթե վոչ պետության և իրավունքի գիտություն:

Յեթե պետական-իրավունքի մեր մասնագետները կուրորեն չհետեւեյին թշնամիներին և բուրժուական իրավաբաններին, այլ ավելի ուշադիր կերպով ուսումնասիրելին մարքսիզմ-լենինիզմի կլասիկների տեսակետները պետության և իրավունքի հարցերի վերաբերմամբ և յեթե նրանք նեղություն կրեյին ուսումնասիրելու բուրժուական մաքի կլասիկներին և վոչ թե բուրժուագիայի եպիգոններին, այն ժամանակ նրանք կհասկանային իրավաբանական կրետինիզմի այն ամբողջ անդնդային խորությունը, վորի մեջ խրվել են նրանք, կարելով իրավունքի ուսումնասիրությունը պետության ուսմունքից:

Իրավունքի ուսմունքի հիմքում պետք և դրված լինի պետության Մարքս-լենինյան ուսմունքը: Այս ուսմունքի տեսա-

կետից և, վոր պետք և հասկանալ բուրժուական իրավունքի բռվանդակությունը և խորհրդային սոցիալիստական իրավունքի բնությունը: Գլխավորը լենինիզմում՝ պրոլետարիատի դիկտատուրան և: Պրոլետարիատի դիկտատուրայի մարքսիստական տեսությունը, վորը զարգացրել են լենինն ու Ստալինը, ներկայացնում եւ սոցիալիստական պետության և սոցիալիստական իրավունքի հիմունքների հիմունքը:

Լենինն ուսուցանում է, վոր բուրժուական պետությունը չի մահանում, այլ պրոլետարիատը վոչնչացնում է նրան հեղափոխության մեջ: Միմիայն հեղափոխությունը կարող է «վաշընչացնել» բուրժուական պետությունը... Բուրժուական պետության փոխարինումը պրոլետարական պետությամբ անկարելի յետանց բանի հեղափոխության<sup>1</sup>:

Կոնկրետ ինչ և նշանակում բուրժուական պետության վաշնչացում: Սա նշանակում է վոչնչացում հին բանակի և, նրա փոխարեն, հեղափոխական բանակի ստեղծում. վոչնչացում իշխանության բուրժուական բոլոր որդանների, բոնության և ձնշման որդանների՝ վոստիկանության, դատարանի, դատախիագության—և հեղափոխական իշխանության նոր որդանների ըստ ստեղծում. վոչնչացում բուրժուական չինովնիկական ապարատի և նրա փոխարին պրոլետարական դիկտատուրայի իշխանության ապարատի ստեղծում. վոչնչացում բուրժուական իրավունքի ինստիտուտների, վորոնք պահպանում եյին արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը և իրավունքի այնպիսի նոր ինստիտուտների ստեղծում, վորոնք ուղղված են բուրժուազիայի և կալվածատերերի դեմ և պահպանում են հեղափոխության նըմանումները:

1917 թվի դեկտեմբերի 5-ին Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հրատարակեց դատարանին վերաբերող դեկրետը, վորատեղի ասվում եր.

«1) վերացնել մինչ այժմ գոյություն ունեցող ընդհանուր դատարանական հաստատությունները, ինչպես՝ ոկրուգային դատարանները, դատաստանական պալատները և կառավարող սենատն իր բոլոր դեպարտամենտներով, ամեն կարգի դինվորական և ծովային դատարաններն, ինչպես նաև առևտրական դատարան-

ները, փոխարինելով այս բոլոր հաստատությունները դեմոկրատական ընտրությունների հիման վրա կազմակերպվող դատարաններով... Բոլոր ժամկետների ընթացքը կասեցվում է 1917 թ. հոկտեմբերի 25-ից սկսած մինչև հատուկ դեկրետի հրատարակումը»:

Այս այն ցայտուն որինակներց մեկը, թե ինչպես պրոլետարիատը հեղափոխության ընթացքում ջարդում և հին, բուրժուական ապարատը, ստեղծում է պետական իշխանության նոր, հեղափոխական ապարատ:

Ամեն վոք, ով գուրկ չեւ քաղաքական դեղքերն ըմբռնելու տարրական ընդունակությունից, կհասկանա, վոր հեղափոխական կառավարության այս ակտով վոչնչացվում եր բուրժուական իշխանության դատարանական ապարատը և մահացու հարված եր հասցրվում բուրժուական իրավունքին:

Բուրժուական պետության դատարանական սիստեմն այն բարդ ու հղոր ապարատներից մեկն եր, վորոնք պահպանում եյին բուրժուական-կալվածատերական իրավունքը:

Մի ուրիշ որինակ. 1917 թվի գեկտեմբերի 15-ին Համառուսական կենտրոնական ու ժողովրդական դեկրետ ժողովրդական գեղագույն ստեղծության խորհրդի վերաբերյալ: Խորհրդային հեղափոխական կառավարության այս ակտի մեջ ապօպամ եր.

«2) Գերանտիստիորի նպատակն և կազմակերպել ժողովրդական անստեղությունը և պետական ֆինանսները...»

3) «Գերանտիստիորին վերապահվում է կոնֆիսկացիայի, սեկվիդիցիայի, սեքվեստրի, արդյունաբերության և առևտրի զանազան ճյուղերի հարկադիր սինդիկացման իրավունք, ինչպես նաև արտադրության, բաշխման և պետական ֆինանսների ընագավառումների իրավունքը»:

Իր այս գեկրետով բանվոր գասակարգի նախ միայն նվաճած խորհրդային իշխանությունը մահացու հարված հասցրեց արտադրության գործիքների և միջոցների մասնավոր սեփականության, վոչնչացնելով միաժամանակ բուրժուական, մասնավոր սեփականությունը պահպանող իրավունքի հին ինստիտուտները և զիմելով արտադրության ընագավառում նոր իրավակարգի կազմակերպման:

Իբրև մի ցայտուն որինակ և վերցնենք Խորհրդական Վլամառուսական Արտակարգ համագումարի «Որենքների ճիշտ Համառուսական պարագաներ»:

<sup>1</sup> Լենին. «Գետություն և հեղափոխություն»: Հայկուհրատ. 1934 թ.  
17—19:

կիրառման» վերաբերող 1918 թվի նոյեմբերի 8-ի վորոշումը:  
Այդ վորոշման մեջ կարգում ենք.

«Ծուլսաստանի բանվոր դասակարգը հեղափոխական կամի  
մի տարվա ընթացքում մշակեց Ծուլսաստանի Սոցիալիստական  
Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության որենքների հի-  
մունքները, վորոնց ճիշտ կիրառումն անհրաժեշտ և Ծուլսաստանի  
բանվորների և գյուղացիների իշխանության հետագա զարգաց-  
ման և ամրապնդման համար»:

Խորհուրդների VII համագումարի վորոշման մեջ ուղղակի  
ասված է, վոր ստեղծվել են նոր պետական կառուցվածքի՝  
պրոլետարիատի դիկտուրայի որ ենքն երի հիմունքները:  
Միթե սա համաշխարհային պատմական նշանա-  
կություն ունեցող փաստ չե, միթե սա հեղափոխության կողմից  
վոչնչացվող բուրժուական-կալվածատիրական իրավունքի փոխա-  
րեն իրավունքի նոր սիստեմի հիմունքներ ստեղծելու փաստ չե:

Ուրեմն, ինչ հիմք կա հայտարարելու, թե արդյունաբերու-  
թյան բնագավառում հեղափոխությունից հետո շարունակում եր  
տիրել հին, բուրժուական իրավունքը: Յեվ միաժամանակ ստիպ-  
ված ես զարմանալ, թե ինչպես կարող եյին թույլ տալ, վոր-  
պեսզի Պաշտոկանիսի նման ամեն կարգի սրիկաներն ու ժողովրդի  
թշնամիները մինչև վերջին տարիները քարողելին ուղղակի հա-  
կանակափոխական զրաքարտություն այն մասին, վոր իրը թե  
«խորհրդային քաղաքացիական որենքները մեծ մասամբ փոխ են  
առնված (ուղեղպցիայի յեն յենթարկված) բուրժուական քաղա-  
քացիական որենսգրքերից»:

Գոյություն ուներ հայեցակետերի ամրող մի սիստեմ, վո-  
րը ժխտում եր խորհրդային իրավունքի սկզբունքորեն նոր բը-  
նույթը: Ժխտվում եր այն ամենը, ինչ վոր գոյություն ուներ  
Մարքսիզմ-Լենինիզմի մեջ պրոլետարիատի դիկտուրայի նոր  
իրավակարգի տեսական մշակման բնագավառում: Նման «տեսա-  
բան»-ներից մեկը, Ա. Գոյխբարտը, գրում եր, «մինչև չոկտեմ-  
բերյան չեղափոխությունն, ինչպես արդեն ասացինք, մեզ մոտ  
համարյա կամ նույնիսկ բոլորովին չկար և վոչ մի տեսական աշ-  
խատություն, վորն որգանապես զարգացներ, մանրամասնորեն  
պատկերեր այն իրավակարգը, վորը գալու յե կապիտալի իշխանու-  
թյան տապալումից հետո: Գոյություն չունեյին նույնիսկ աշխա-  
տություններ, վորոնք ընդհանուր գծերով կապիտալի կանխանշեյին այդ  
ապագա իրավակարգի ուրվագծերը»:

Յեկեր, տեսեք, վոր այս մարդկանց համար Մարքսի, Են-  
գելսի, Լենինի, Ստալինի մեծագույն աշխատությունները, վոչ մի,  
նվազագույն չափով անգամ, տեսական հիմունքներ չեցին տալիս  
նոր հասարակության իրավակարգի համար:

Բոլոր այս, վոչ-բարով տեսաբանները, Գոյխբարտները, Պա-  
շուկանիները և ուրիշները, վորոնք իրենց պատկերացնում  
եյին իրեւ նոր հասարակարգի իրավական սիստեմի ստեղծողներ,  
իրավես ներկայացնում եյին սոցիալիզմի թշնամիներ: Հեղափո-  
խությունն անում եր իր գործը, վոչշացնում եր հին իրավա-  
կարգը և ստեղծում եր նորը, յեներով պետության և իրավունքի  
մարքս-լենինյան ուսմունքի մեծագույն աշխատական սկզբունքներից:

«Պետության և հեղափոխության» մեջ լենինը, շարագրելով  
պրոլետարիատի խորհրդները բուրժուազիայի դիկտուրության տա-  
պալման գծով, կանխանչում և պրոլետարիատի ստեղծագործա-  
կան խորհրդների մեծ պլանը նոր հասարակարգի՝ սոցիալիզմի  
կառուցման գործում:

Իշխանությունը գրավելուց հետո առաջնագույն ինդիր և  
հանդիսանում ստեղծել ուժեղ պետական ապարատ, վորը հենվեր  
աշխատավորների ամենալայն մասսաների ուղղության վրա:

Պրոլետարական դիկտուրայի առաջին իսկ օրերից, քա-  
ղաքացիական պատերազմի ընթացքում, ծանրագույն տնտեսական  
պայմաններում քայլ առ քայլ ծավալվում եր պետական ապարատ  
ստեղծելու, նոր անտեսական իրավարգի հիմունքներ ստեղծելու  
պատմական նշանակություն ունեցող աշխատանքը: Այս աշխա-  
տանքի ընթացքում կազմակորվում եյին խորհրդային, ըստ եյու-  
թյան, սոցիալիստական իրավունքի հիմունքները:

1917 թվի նոյեմբերի 15-ին լենինի և Ստալինի ստորագրու-  
թյամբ հրատարակվեց «Ծուլսաստանի ժողովուրդների իրավունքների Դեկլարացիան», վորը հայտարարեց «Ծուլսաստանի ժողովուրդների հավասարությունն ու գիրշիանությունը», «Ծուլսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը մինչև անջատման և ինքնուրույն պետություն կազմելու իրավունքը ներառյալ», «բո-  
լոր և ամեն կարգի ազգային և ազգային-կրնական արտօնությունների և սահմանափակումների վերացումը», «աղդային փոքրամաս-  
նությունների և Ծուլսաստանի անընդհանուր իշխանության վրա ընակիվող աղդ-  
գաղրական (ետնողբաֆիական) խմբերի ազատ զարգացումը»:

1917 թվի գեկտեմբերին հրատարակվեց «Խորհուրդների ի-  
րավունքներին և պարտականություններին վերաբերող հրահանգը»,

վորը բնորոշում եր խորհուրդների, իրրև իշխանության մարմինների, իրավունքներն ու պարտականությունները»: 1918 թվի հունվարի 28-ի «Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակի մասին դեկրետ ասում եր. «Ժողովրդական Կոմիտարների Խորհուրդը վորոշում ե. կազմակերպել նոր բանակ՝ «Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակ անունով...»:

Խորհուրդների III Համառուստկան Համագումարի (1918 թվի հունվարի 31-ին) ընդունած «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիա»-յի մեջ գրված ե, վոր «Մուսատանը հայտարարվում ե բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների խորհուրդների հանրապետություն»: այսուհետև հայտարարվում ե հոգի սոցիալիզմացիա. «Վերացվում ե հողի մասնավոր սեփականությունը, և ամբողջ հողային ֆոնդը հայտարարվում ե համաժողովրդական ունեցվածք և առանց վոր և ե հետպահան, հանձնվում ե աշխատավորներին...»: Մայդան ե բանվորական վերահսկողություն, աղջայնացվում են անտառները, ջրերը, բանկերը և այլն:

1919 թվի հունվարի 1-ին հրապարակվեց «Եելուստիայի ժամանակավոր հեղափոխական բանվորա-գյուղացիական խորհրդագյին կառավարության Մանիքիստը, վորը հայտարարում եր, վոր «Եելուստիայում ամբողջ իշխանությունը պատկանում ե միայն բանվորների, գյուղացիների, բատրակների և կարմիր բանակայինների պատգամավորների խորհուրդներին»:

1919 թվի հունվարի 26-ին Ռևլը այս ժամանակավոր բանվորա-գյուղացիական կառավարությունն ընդունեց դեկլարացիա, վորով նա հայտարարեց «Ռևլայինայի Խորհրդային Հանրապետության միացումը խորհրդային Ռուսաստանի հետ սոցիալիստական ֆեդերացիայի հիմունքներով...»:

1919 թվի սկիզբներին ընդունվել եյին Բելուստիայի և Ռևլայինի Խորհրդային Հանրապետությունների Սահմանադրությունները:

1920 թվին կնքվել եյին դաշնքային պայմանագրեր ՌԽՖՍՀ Հանրապետության և Ազգային Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության, ՌԽՍՖՀ Հանրապետության և Ռևլ. ԽՍ Հանրապետության միջև. 1921 թվին՝ պայմանագրեր ՌԽՖՍՀ Հանրապետության և Բել. ԽՍ Հանրապետության միջև. ՌԽՖՍՀ Հանրապետության և Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության միջև:

1922 թվին ընդունվեցին Հայկական, Վրացական Խորհրդա-

յին Հանրապետությունների Սահմանադրությունները, Անդրկովկասյան Սոցիալիստական մեզներատիկ Խորհրդային Հանրապետության Սահմանադրությունը:

Այստեղ բերված որինակներն արդեն իսկ կատարելապետամուղեցուցիչ կերպով ցույց են տալիս, թե ինչ ահազին սիստեմատիկ աշխատանք եր տանում յերիտասարդ պրոլետարական պետությունը նոր հասարակարգ ստեղծելու գծով:

Առաջին հերթին պետք ենկատի ունենալ, վոր բուրժուազիայի տապալման և պրոլետարիատի կողմից պետական իշխանությունը գրավելու առաջին իսկ որերից սկսվել եր ամբողջ յերկրի մասշտաբով աշխատանք, վորպեսզի ստեղծվեն պրոլետարիատի գիկտատուրայի հիմունքները, այն ե՝ բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորների խորհուրդների, իրրև աշխատավորների իշխանության մարմինների, կազմակերպման աշխատանքներ:

«Մեծ նախաձեռնության» մեջ կենինը գրում եր.—«Բառիս բուն իմաստով ավելի դեմոկրատական, աշխատավոր և շահագործվող մասսաների հետ ավելի սերտ կապված պետություն դևուս չի յ եղ ել աշխատանք»<sup>1</sup>:

Նկատի ունենալով պրոլետարիատի գիկտատուրայի այս առանձնահատկությունը, կենինը «Պետություն և հեղափոխություն» աշխատության մեջ գրում եր, վոր նույնիսկ Փարիզյան կոմունան—ներկայացնում ե խոտորում պետությունից, այս բառի բուն իմաստի առումով:

Պրոլետարիատի գիկտատուրան դա՝ նոր տիպի պետություն ե: Յեզ այն իրավունքը, վոր ստեղծում ե այս պետությունը, նոր տիպի իրավունք ե՝ խորհրդային, դեմոկրատական իրավունք, վորը պաշտպանում ե ժողովրդի ճնշող մեծամասնության՝ աշխատավորների շահերը:

Ճիշտ և հաստատուն պետական-իրավական կարգ ստեղծելու այս հսկայական հեղափոխական աշխատանքը պատկեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմակերպման վերաբերող գեկրացիայով և պայմանագրով, վորոնը ընդունվեցին ԽՍՀ Միության Խորհուրդների և Համագումարի կողմից 1922 թվի դեկտեմբերի 30-ին:

Խորհուրդների III Համառուստական Համագումարում, 1918 թվի հունվարի 24-ին կենինն ասում եր. «... Մենք պարտավոր

<sup>1</sup> Լ. Կ. Ի. Ա. Վ. Վահանուրյան. համ. V, եջ 453.

ենք ասել վոր մեր խորհուրդների հանրապետությունը սոցիալ-քառական ե, վորովհետեւ մենք վոտք ենք գրել այդ հանրապետի վրա և այդ խոսքերը դատարկ խոսքեր չեն լինի...

Յեկ այդ հին, բուրժուական իրակարգի գեմ արգեն կանգնած և նոր պետություն՝ Խորհուրդների հանրապետությունը, աշխատավոր, շահագործվող դաստիարակերի հանրապետությունը, դաստիարակերի, վորոնք ջարդում են հին բուրժուական միջնորդները<sup>1</sup>:

Լինինի այս խոսքերը մի ավելորդ անգամ հաստատում են, վոր պրոլետարական դիկտատուրան առաջին խկ որերից ահազին ստեղծագործող աշխատանք ծավալեց նոր հաստիակարգ ստեղծելու գծով:

Յեկ պետք ե, իսկապես, լինել սոցիալիզմի յերդվյալ թշնամի կամ անհաւատի մի ապօռ չհասկանալու համար, վոր իր բովանդակությամբ, իր նպատակադրութեարով նոր, սոցիալիստական իրավունքը սկսեց կերտվել Խորհրդային իշխանության գոյության հենց առաջին որերից սկսած:

1917 թիվից մինչև 1922 թիվը ներառյալ ժամանակաշրջանում Խորհրդային իշխանության միջոցառութեարներն իրենց ամբողջականությամբ նախապատճենեցին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը կազմակերպելու, 1924 թիվն միութեանական սահմանադրությունն ընդունելու բոլոր պայմանները, մի սահմանադրություն, վորը վորոշում և մեր յերկրի, իրարևե Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության, պետական կառուցման իրավակարգը:

\* \* \*

Մասնագիտական իրավաբանական մամուլի եջերում հաճախ հանդիպում են այսպիսի վրդով ներշնչված դատողություններ. Խորհրդային իրավունքն, առանձնապես մինչև սոցիալիզմի հաղթանակն, իր ձեռվ ներկայացնում եր բուրժուական իրավունք, իսկ այն շրջանում, յերբ գոյություն ունեցին մասնագոր կապիտալիստական տարրեր և մասր սեփականություն, իրավունքը՝ բուրժուական եր. «բուրժուական կողեքսներից վերցրած հողվածների մասսայի մեջ խորհրդային քաղաքացիական կողեքսում բների նման ցողված են առանձին սպեցիֆիկ «խորհրդա-

<sup>1</sup> Ենթա հ. հ. XXII, էջ 260—267.

յին» հոդվածներ» («Խորհրդային անտեսական իրավունքի դաշտը»):

Այն հանգամանքից, վոր ԽՍՀ Միության մեջ գոյություն ունեցին տարբեր տնտեսական կացություններ, չի կարելի յեղակացություն անել, թե յուրաքանչյուր կացությին համապատասխանում ե և իր իրավունքը և թե այդ իրավունքը—հիմնականում բուրժուական իրավունք ե:

Խորհրդային պետությունը ստիպված եր վորոշ ժամանակաշրջան և վորոշ պայմաններով թույլ տալ մասնավոր կապիտալիստական տարրերի գոյությունը. Այդ վաստակ խորհրդային պետությունն որինակացրել եր իրավական, իրավաբանական ձեռվի:

Այս հենց այս հանգամանքը գայթակության քար դարձավ իրավունքի մասնագետների համար. Նրանք չեյին կարող հասկանալ, թե ինչպես ե, վոր բովանդակությամբ սոցիալիստական իրավունքը պաշտպանում և արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը:

Յեթե խորհրդային իրավունքին, իրեւ ամբողջության, նըրանք մոտենացին իրեւ պրոլետարիատի գիլիստառության գարաշը ջանի իրավական վերնաշնչներին, նրանք այն ժամանակ կհասկանալին, վոր, թեև առանձին որենքներն իրենց մեջ արտացոլում են անցյալի հանդեպ վորոշ հարկադրական գիշումներ, բայց իրենց ամբողջությամբ նրանք առաջ դնում են միամնական մի խնդիր, այն ե՝ շահագործման վոշնչացումը և սոցիալիզմի կառուցումը:

Գործին այսպիս մոտենալու դեպքում միանգամից ակներեւ գառնում այն, վոր մեր խորհրդային իրավունքն իր առաջադրանքներով և նպատակներով, իր ծագման առաջին որերից սկսած յեղեւ և և սոցիալիստական իրավունք, վորովհետեւ նա կաղապարվել և սոցիալիստական հեղափոխության հաղթանակի և պրոլետարիատի գիլիստառության սահմանման հետևանքով:

Ինքնըստանքյան հասկանալի յե, վոր մեր եկոնոմիկայի բարդությունն ու քաղմականակությունը նրա զարգացման տարրեր և սահմանական իրավունք, վորովհետեւ նա կաղապարվել և սոցիալիստական հրատարակած որենքների մեջ:

Իրավունքի ընագավառում և տեղի յեր ունենում կատաղի դասակարգային կափի: Խորհրդային իրավունքը զուրս եր մզում բուրժուական հաստիական հարաբերությունները, բուրժուական իրավունքի նության ըեկուներն ու մասցորդները: Բայց, յերբ մենք խոսում ենք Խորհրդային իրավունքի մասին, յերբ

մենք բնորոշում ենք նրան իրեն սոցիալիստական իր բովանդակությամբ, մենք նկատի ունենք հենց այն վճռողականը, վնասը բնորոշ և մեր իրավունքի համար, այն եւ սոցիալիստական հասարակություն կառացենու խնդիրը, սոցիալիստական արտադրական հարաբերությունների ըստամենայնի ամրացումը, տնտեսության սոցիալիստական սեկտորի համար նախապատճենավորթյան իրավական պայմանների ստեղծումը:

1922 թվին Հենինը Դ. Ի. Կուրսկովն ուղղած իր նամակին գեջ, վորտեղ նա խոսում եր անտեսության կապիտալիստական տարրերի հանդեպ խորհրդացին իրավունքի ունեցած վերաբերմունքի մասին, գրում եր.

«Մենք «մասնավոր»՝ վոչինչ չենք ճանաչում, տնտեսության բնագավառում ամեն ինչ մեզ համար հանրային՝ իրավական ե, բայց վոչ մասնավոր։ Մենք թույլ ենք տալիս միայն պետության կապիտալիզմ... Այստեղից հետեւմ ե. լայնացնել պետական միջամտության կիրառումը «մասնավոր-իրավական» հարաբերությունների բնագավառում, ընդունակական պայմանագրերի վերացման գծով պետության իրավունքը. «Քաղաքացիական իրավահարաբերությունների» վերաբերմամբ կիրարեկ վոչ թե corpus juris romani, այլ մեր հեղափոխական իրավագության վեհական կառավագական միավոր որինակելի պրոցեսներով սիստեմատիկաբար, համառոքեն և հաստատակամությամբ ցույց տաԵ, թե ինչպես պետք ե գործել խելքով և յեռանդով<sup>1</sup>:

Յեղ դարձյալ այս հարցի առթիվ ընկ. Մոլոտովին ուզդած իր նամակում կենինը գրում եր.

«Հանձնաժողովի գլխավոր խնդիրը պետք է ընդունել. լիովին ապահովել պրոլետարական պետության շահերն այն տեսակետից, վոր նա համարավորություն ունենա վերահսկելու (հետագա հսկողության կարգով) առանց բացառության բոլոր մասնավոր ձեռնարկությունները, վերացնելու այն բոլոր պայմանագրերն ու մասնավոր գործարքները, վորոնք հակասում են ինչպես որենքի տառին, նույնպես և բանվորական ու զյուղացիական աշխատավորական մասսայի շահերին։ Վոչ թե բութուական քաղաքացիական իրավունքին ստրկական նմանողություն, այլ նրա միշտականական պահպանությունը մեր որենքների վոգուն համապատաս

խան, առանց ձնշիլու տնտեսական կամ առեստական աշխատանքը<sup>1:</sup>

Յեթե վերջնենք խորհրդային իշխանության 20 տարվա ամբողջ քաղաքականությունն, ապա ամենքի համար ակներել կլինի, վոր այս քաղաքականության նպատակը կազմում եր կապիտալիստական տարրերի կատարյալ լիկվիգացիան եկոնոմիկայի բոլոր ընագավառներում։ Այս կապակցությամբ արժեք հիշել կուսակցության քաղաքականությունը կուլտակության վերաբերմամբ։ Սահմանափակման (և գուրս մղելու) քաղաքականությունից կուսակցությունն անցավ կուլտակության՝ իրեն դասակարգի լիկվիգացիայի յենթարկելու քաղաքականության՝ համատարած կոլեկտիվացման բաղայի վրա։ Խորհրդային իրավունքն այս գործում ահագին նեղափոխական կազմակերպչական գեր կատարեց։

Խորհրդային իրավունքի ձևի հարցում չափազանց շատ խառնացվություն են կուտակել իրավունքի կենծ մասնագետները:

Իրավունքի հենց ձեմ ըմբռնութիւն այս մարդկանց կողմից վոչ  
մի ընդհանուր բան չունի ձեմ և բովանդակության փոխհարաբե-  
րությունների գիտական, մարքսիստական ըմբռնման հետ:

Ամբողջ, այսպես կոչված, իրավական ճակատի միանական կարծիքը մինչև վերջին ժամանակ հետեւյալն եր. մեր իրավունքը խորհրդային ե, բայց ձևով նա բուրժուական իրավունք է:

իսկ ի՞նչ ե նորկայացնում, նրանց տեսակետից, իրավունքի  
«ձեր»: Խորհրդային իրավունքի ձեր սահմանման նրանք մոտեն-  
ում ելին զուտ մեքենաբար: Նրանք մոտավորապես դատում  
ելին այսպես. բուրժուական իրավունքի մեջ գոյություն ունի  
որենքի գաղափարը. հետեւաբար, խորհրդային իրավունքը փոխ և  
առնված բուրժուական իրավունքից. բուրժուական իրավունքի  
մեջ գոյություն ունի քրեական հանցանքի գաղափարը, խորհրդա-  
յային իրավունքի մեջ ևս պահպանվում է այս. հետեւաբար, նա  
կրում և բուրժուական բնույթ. բուրժուական իրավունքի մեջ  
գոյություն ունի պայմանագիր. խորհրդայինում՝ նույնպես,  
հետեւաբար, այս ձեր նույնպես փոխ և առնված բուրժուական  
իրավունքից և այլն:

Յեկ գուրս և գալիս, վոր ձեկի տակ մարդկեկ հասկանում են միայն իրավական տերմինոլոգիան, այն, ինչ վոր կարող ե վերաբերվել արտաքին ձեկն, բայց վոչ իրավունքի իսկական բազմա-

<sup>1</sup> В. И. Ленин: Соч., т. XXIX, стр. 419.

դակություն։ Առանձին «իրավագետ»-ները, պոկելով ձեզ բովանդակությունից, խճողվելով իրավաբանական տերմինոլոգիայի մեջ, գործելով միայն դատարկ արստրակցիաներով, ձեռնածություն անելով և այսպես, և այնպիս, բանավիճելով միմյանց դեմ, գործի դնելով անբովանդակ գաղափարներ, իրենք խճանվում ենին այն աստիճան, վոր չեցին կարողանում տեսնել, թե վորտեղ և աջ կողմը, վորտեղ՝ ձախը։ Արանով իսկ նրանք հեշտացնում եյին սոցիալիստական հայրենիքի թշնամիների համար Նրանց զագրելի գործը։

Հայտնի յեւ մարքսիստական այն ճշմարտությունը, վոր ձեզ արտահայտում եւ բովանդակության մեջ։ Բովանդակությունն ինքը վորոշում եւ ձեզ։ Չեի և բովանդակության մեղքվածքն անխուսափելիրեն հասցնում եւ նրան, վոր բովանդակությունը զագարում եւ լինել այն, ինչ վոր եր նա, իսկ ձեզ, կորցնելով իր բովանդակությունը, նույնպես գաղարում եւ լինել տվյալ բովանդակության ձե։

«Կոլտնտեսությունը տն տեսական կազմակերպության սոցիալիստական ձևն եւ այսպես, ինչպես և խորհուրդները հանդիսանում են քաղաքական կազմակերպության սոցիալիստական ձե։ Ինչպես կոլտնտեսություններն, այնպես ել խորհուրդները հանդիսանում են մեր հեղափոխության ամենամեծ նվաճումը, բանվոր դասակարգի ամենամեծ նվաճումը։ Բայց կոլտնտեսություններն ու խորհուրդները միմիայն կազմակերպության ձե են, ճիշտ և, սոցիալիստական, բայց այնուամենայնիվ կազմակերպության ձե։ Ամեն ինչ կախված են նրանից, թե ինչ բովանդակ կություն կլեցվի այլ ձեւի մեջ... Բանն, ամենից առաջ, խորհուրդների ավաստանքի բովանդակությունն ե, բանը խորհուրդների աշխատանքի բնույթն ե, բանն այն ե, թե ով ե զեկալարում խորհուրդները՝ հեղափոխականները, թե հականեղափոխականները»<sup>1</sup>։

Եթե խորհրդային իշխանությունը պրոլիտարիատի գիկտառուրայի ձեւ ե, ապա դա նշանակում ե, վոր միայն խորհուրդների ձեի մեջ և հարավոր պրոլիտարիատի գիկտառուրան։ Չեով և բովանդակությամբ խորհուրդները—դրանք պրոլիտարական գիկտառուրայի մարմիններ են։

Խորհրդային իրավունքի ձեզ, իրեն բուրժուական իրավունքից սկզբունքորեն տարբերվող ձե, արտահայտվում ե վոչ թե տերմինոգրիայի մեջ, այլ նրա քաղաքական կողմնորոշման մեջ,

<sup>1</sup> Սա աւելի ն. «Լենինիզմի հարցերը»։ Հայկական 1935 թ. հջ 643—644

նրանում, վոր այդ իրավունքն ստեղծում են իորհութերը, իրեն պրոլիտարիատի գիկտառուրայի մարմիններ։ Նա խորհրդային իրավունք ե, այսինքն բովանդակությամբ՝ սոցիալիստական։

Խորհրդային որենքների առանձին հոգվածների մեջ, ինչպես և որենքների մեջ լոգիանուր առմամբ, հանդիպում ենք բուրժուական որենազրության տերմիններ։ Բայց սա չե ինդիբը։ Եյությունը կայանում ե նրանում, վոր իրավունքի խորհրդային բնույթը կամ խորհրդային ձեն արտահայտվում ե, ինչպես ասցինք, նրա քաղաքական կողմնորոշման, նրա սոցիալիստական բովանդակության մեջ։ Խորհրդային իրավունքի թե ձեզ և թե բովանդակությունը միանական են։ միայն իրեն խորհրդային իշխանության կողմից հրատարակվող իրավունք, նա կարող է լինել պրոլիտարական, սոցիալիստական իրավունք։

Ծեր Հեղեղն ասում եր, բովանդակություն՝ ահա թե ինչն ե վճռում ինդիբը։—և զրա հետ միաժամանակ նա նշում եր.

«Չեի և բովանդակության հակադրությունը քննարկելիս եյապես կարեոր և աշքաթող չանել վոր բովանդակությունն անձեւ չե, այլ ձեզ միաժամանակ և՛ պարունակվում ե հենց բովանդակության մեջ, և՛ ներկայացնում ե ինչ վոր արտաքին բան նրա վերաբերմամբ»<sup>2</sup>։

Հեղեղը սրախոսում եր նրանց հասցեյին, վորոնք ձեն ու բովանդակությունը հասկանում եյին իրեն ինչ-վոր մեքենայական մի բան։

«Յերբ խոսում են անբովանդակ գրքի մասին, այդ բառերի տակ, ինչպես հայտնի յե, հասկանում են վոչ միայն դատարկ եղերով գիրքն, այլև այնպիսի գիրքը, վորի բովանդակությունն այնպիսին ե, վոր նա համարյա հավասար և առեն տեսակի բովանդակության բացակայության»<sup>2</sup>։

\* \* \*

Մինչև սոցիալիզմի վերջնական հաղթանակը մեր խորհրդային իրավունքն անհրաժեշտորեն արտացոլում եր իր մեջ վորոշ զիջումներ տնտեսության վոչ սոցիալիստական տարրերի հանդեպ, թեև միշտ ել հիմնական նպատակ ուներ սոցիալիզմի հաղթանակը։ Իսկ հաղթանակած սոցիալիզմի պայմաններում մեր

<sup>1</sup> Гегел. Соч. т. I, стр. 224.

<sup>2</sup> Նույնը, հջ 225—226.

իրավունքը թե ձևով և թե բովանդակությամբ ամրողջապես սոցիալական հասարակության իրավունք է:

Մեր իրավունքն արտացոլում և պաշտպանում է սոցիալական արտադրական հարաբերությունները, սոցիալիստական եկոնոմիկան: Խորհրդային իրավունքը չի ճանաչում արտագրության գործիքների և միջոցների կապիտալիստական սեփականություն՝ նա չի ճանաչում շահագործում և բացառում և նրան: Խորհրդային որենսդրությունը ստիլված է դեռ արտացոլելու համար քանի մնացուկներ: Բայց սրանով մեր իրավունքը չի դադարում լինել սոցիալիստական:

Սոցիալիստական իրավունքի սիստեմը յերկնքից չի վայր ընկեր: Նա կերտվում եր սոցիալիզմի համար մղող պայքարի ընթացքում, այն չափով, վորչափ սոցիալիստական տարրերը հաղթանակում եյին կապիտալիստական տարրերին: Այս պայքարը կատարվում եր և իրավունքի բնագավառում: Խորհրդային իրավունքն եւ ավելի ու ավելի գուրս եր մղում բուրժուական իրավունքի մնացորդները:

Սոցիալիստական իրավակարգի սիստեմի կերտման համար մղվող պայքարի պատմությունը պատկեց մեծ ստեղծագործությամբ՝ Սամալինյան Սահմանադրությամբ: Սահմանադրության մեջ ավելի լրիվ, քան թե մինչև այժմ վոր և և մի այլ տեղ, արտահայտված են խորհրդային սոցիալիստական իրավունքի հիմունքները: Սահմանադրությունն ինքը սոցիալիստական հասարակության պնտական կառուցվածքի Հիմնական Որենքն ե: Նա վորոշում է սոցիալիստական իրավունքի հիմնական բնույթը բուռղություններով, բոլոր բնագավառներում: Այժմ իրավունքի և պետության բնագավառում մասնագետների խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի նրանք, յելնելով Սահմանադրությունից, մանրամասնորեն մշակեն սոցիալիստական իրավունքը:

ԽՍՀ Միության սահմանադրության մեջ տրվում է մեր հասարակության դասակարգային կազմի վորոշումը: Սահմանադրության մեջ տրված է մեր պետության քաղաքական հիմքը՝ աշխատավորների խորհուրդները—և մեր իրակարգի անտեսական հիմքը՝ սնտեսության սոցիալիստական սիստեմը և արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը: Սահմանադրությունն, այնուհետեւ, սահմանում է ԽՍՀ Միության պետական կառուցվածքը և վորոշում և քաղաքացիների իրավունքներն ու պարտականություն-

ները: Ամբողջությամբ վերցըած, նա արտահայտում է սոցիալիստական պետության իրավական կազմը:

Սոցիալիստական իրավունքը հանդիս է զավա այն որենք նարի ձևով, վորոնք հրատարակում են Խորհրդային իշխանության մարմինները: Սոցիալիստական իրավունքը տարրերվում է բովանդակությունն ու ձեր բուրժուականից նրանով, վոր նրա բովանդակությունն ու ձեր կազմում են սոցիալիստական արտադրական հարաբերությունների բարձրացների ընդունում և արտադրության սոցիալիստական յեղանակի բը, վոր նա յենում և արտադրության սոցիալիստական յեղանակի բը, ԽՍՀ Միության քաղաքացիների շահերի ակտիվ պաշտպանությունից, քաղաքացիների, վորոնք հանդիսանում են սոցիալիստական շինարարության մասնակիցներ:

Խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի սիստեմատիկաբար զարգացնենք սոցիալիստական իրավունքը և ամրապնդենք բարգավաճականության և սոցիալիստական նրա գերը սոցիալիստական սեփականության և սոցիալիստական հանրակեցության կանոնների պահպանման գործի մեջ:

Պետք է վերջնականապես վերացնել այն թշնամական տեսառիթյունները, վորոնք փորձում են ապացուցել պետության մասությունները, մարման անհրաժեշտությունը ժամանակակից ետապում: Իրավահացման անհրաժեշտությունը եյին այն «թեորիաներվածքների մեջ յերկար ժամանակ տիրում եյին այն թեորիաները», թե պետությունը մահանում է չուլուեմբերյան Հեղափոխությունը, թե պետության որերից սկսած, իսկ իրավական ձեռները քանի գրադարձին որերից յերկար վերջնականապես կմահանան: Հարկ չկա ակտուցմամբ նրանք վերջնականապես կմահանան: Հարկ չկա ակտուցենու այս թեորիիկների հականեղափոխական, արոցկիստականնորության ընույթը:

Բայց մնում է այն փաստը, վոր այս թեորիկները գետ վերջականապես չեն «հողմահարվել» իրավունքի մի քանի մասնակիությունների և վոչ մասնագետների գործիքներից:

Մասնագիտական գրականության մեջ ամենախճողված հար-

ցերից մեկը ներկայացնում է բուրժուական իրավունքի բնկոր-

ների, մնացուկների գրությունը կոմունիզմի առաջին Փաղում:

Մինչդեռ հարցն ինքնըստինքյան պարզ ե: Մարքսն ու

Լենինն սպառիչ պարզաբանություններ են տվել այս հարցի վե-

րաբերմամբ:

Մարքսն այս առթիվ գրում ե.

«Մենք այսուղ գործ ունենք վոչ թե այնպիսի կոմունիստական հասարակության հետ, վորը զարդարեց եւ իր սեփական

կապիտալիստական հասարակությունից և վորը, հետեւաբար, բոլոր կողմերով ել՝ անտեսական, բարոյական ու մտավոր, կրում ե հին հասարակության գրոշմը, այն հասարակության, վորի արդանդից նա ծնվել ե... Այստեղ ակնհայտորեն տիրում ե հենց այն սկզբանքը, վորը կանոնավորում ե ապրանքափոխանակությունը, վորչափով դա հավասար արժեքների փոխանակություն ե: Փոխված են բովանդակությունն ու ձեր, վորովհետեւ փոփոխված պայմաններում վոչ վոք չի կարող տալ այլ բան, քան իր աշխատանքը, իսկ մյուս կողմից վոչինչ չի կարող առանձին անհատի սեփականություն դառնալ, բացի անհատական սպառողական միջոցներից...

Դրա համար ել այստեղ հավասար իրավունքն սկզբանքունքներն գենես բուրժուական իրավունքն ե, թեև սկզբունքն ու պրակտիկան այլևս իրար զեմ չեն մարտնչում, այն ինչ ապրանքափոխանակության ժամանակ համարժեքների փոխանակությունը գոյություն ունի միայն մի ջեն հաշվով, այլ վոչ թե յուրաքանչյուր առանձին զեղքի համար<sup>1</sup>:

Լենինը «Պետություն և հեղափոխություն» գրքի մեջ, զարդարացնելով Մարքսի այս գրույթները, գրում եր.

«Հավասար իրավունք», ասում ե Մարքսը, այստեղ իրոք կա, բայց այդ դեռևս «բուրժուական իրավունք ե», վորը, ինչ պես և ամեն մի իրավունք անհավասարություն և յենթագրություն ե դանազան մարդկանց վերաբերմամբ, վորոնք իսկապես միանման չեն, միմյանց հավասար չեն. այդ պատճառով ել «հավասար իրավունք» հավասարության խախտում և անարդարություն ե»: Հիրավի, ամեն վոք՝ մյումների հետ հասարակական աշխատանքի հավասար բաժին կատարելով՝ ստանում ե հասարակական արտադրության հավասար բաժինը (վերեւում հիշված հանուրդները կատարելուց հետո):

Մինչեռ առանձին մարդիկ հավասար չեն, մեկն ավելի ուժեղ ե, մյուսն ավելի թույլ, մեկն ամուսնացած ե, մյուսը՝ վոչ. մեկն ավելի շատ յերեխաներ ունի, մյուսն ավելի քիչ և այլն»<sup>2</sup>:

Յեկ գարձյալ.

«Իր առաջին փուլում, իր առաջին աստիճանի ժամանակ

<sup>1</sup> Մարքս. «Գոթայի ծրագրի քննադատությունը». Հայկունիատ, 1937 թ. էջ 33—34.

<sup>2</sup> Լենին. «Պետություն և հեղափոխություն». Հայկունիատ, 1934 թ. էջ 85—86.

կոմունիզմը չի կարող անտեսապես լիովին հասուն լինել, լիովին ազատ լինել կապիտալիզմի ավանդություններից կամ հետքերից: Այստեղից ե բղխում այն հետաքրքրական յերեսությը, ինչպիսին ե «բուրժուական իրավունքի նեղ հորիզոնի» պահպանումը կոմունիզմի ժամանակ, նրա առաջին փուլում: Բուրժուական իրավունքը, ոպա ամանը, արդյունքների բաշխման վերաբերմաբ, ի հարկե, անխուսափելիորեն նաև բուրժուական պետություն ե յենթագրությունը, վորովհետեւ իրավունքը վոչինչ ե առանց այն ապարատի, վոր կարող ե հարկադրել այդ իրավունքի նորմաները կատարելու:

Դուքս ե գալիս, վոր կոմունիզմի շրջանում վորոշ ժամանակի ընթացքում վոչ միայն բուրժուական իրավունքն ե մնում, այլ մինչև իսկ բուրժուական պետությունն առանց բուրժուակայից»<sup>3</sup>:

Մենք այստեղ բերեցինք Մարքսի և Լենինի հիմնական դրույթները «բուրժուական» իրավունքի մնացորդների մասին սոցիալիզմի շրջանում:

Այս բոլոր մեջբերումներից հետեւում ե այն պարզ յեղակացությունը, վոր սոցիալիզմի շրջանում իրավունքը չի պաշտպանում բուրժուազիայի շահերը: Այս իմաստով նա բուրժուական չի հանդիսապում վոչ եր ձեռվ և վոչ ել իր բովանդակությամբ: Մարքսի և Լենինի այս բոլոր գրույթներն ուղղված են խոր հրդային իրավունքի այն «թեորիիկների» գեմ, վորոնք պնդում են, թե իրավունքը սոցիալիզմի շրջանում բուրժուական ե: «Աշխատանքի հավասար քանակության փոխարեն արտադրանքի համար քանակությունը սկզբունքը հենց այն ե, ինչ վոր կոչվում վասար քանակություն» իրավունքի մնացորդ:

Մարքսն ու Լենինը նկատի ունեն յերկու սկզբունք: արտադրանքների բաշխման բուրժուական սկզբունքը համարժեք ապրանքափոխանակության հիմունքի վրա և զուտ կոմունիստական սկզբունքը՝ յուրաքանչյուրին ըստ պահանջների:

Կոմունիստական հասարակության առաջին փազում, այս սինքն սոցիալիզմի շրջանում, զուտ կոմունիստական սկզբունքը չի կարող իրագործվել վորովհետեւ հասարակությունը գեռ չի հասել անհարաժեշտ անտեսական հասունության:

<sup>1</sup> Լենին. «Պետություն և հեղափոխություն». Հայկունիատ, 1934 թ. էջ 85—86.

Կոմունիզմի առաջին ֆաղում գործում ե ըստ աշխատանքի բաշխման սոցիալիստական սկզբունքը, վորը գոյություն չուներ և չեր կարող գոյություն ունենալ կապիտալիզմի շրջանում. բայց ըստ աշխատանքի բաշխման սկզբունքի հիմքում դրված է համարժեք փոխանակման սկզբունքը, վորը ծագել և դեռ կապիտալիզմի շրջանում:

Սակայն համարժեք փոխանակման այս սկզբունքն արդեն արմատականապես կերպարանափոխվել և սոցիալիզմի շրջանում: Մարդու ասում ե, վոր բուրժուական հասարակության մեջ այդ սկզբունքը գործում ե միջին հաշվով, բայց վոչ ամեն մի առանձին դեպքում: Բուրժուական հասարակության մեջ, այն պատճառով, վոր այնտեղ գոյություն ունի շահագործում, բանվորին լավագույն դեպքում փոխհասուցվում ե նրա բանվորական ուժի արժեքը: Սոցիալիզմի ժամանակ բանվորը ստանում է իր բաժինը ամբողջությամբ (հանեղով համապետական կարիքների համար նշանակվածը), վորովհետեւ այստեղ այլևս գոյություն չունի շահագործում:

«ԽՍՀ Միության մեջ իրականացվում ե սոցիալիզմի սկզբունքը. «յուրաքանչյուրից ըստ նրա ընդունակության, յուրաքանչյուրին՝ ըստ նրա աշխատանքի» (ԽՍՀ Միության Սահմանադրություն. հոդ. 12):

Այս սկզբունքի կիրառումը մեր հասարակության կյանքում վկայում ե բանվոր դասակարգի ահազին նվաճումների մասին: Սա նշանակում ե, վոր աշխատանքը դարձել է մարդկանց բարեկցության և հասարակական դիրքի միակ աղբյուրը:

ԽՍՀ Միության բանվոր դասակարգի նվաճումների ամբողջ պատճական նշանակությունն ուղիղ զնահատելու համար պետք ե նկատի ունենալ վոր ըստ աշխատանքի արտադրանքը համարժեք փոխանակելու սկզբունքը իրագործվել և մի հասարակության մեջ, վորտեղ բացակայում ե արտադրության գործիքների և միջոցների մասնավոր սեփականությունը:

Միայն այս սոցիալիստական սկզբունքի հիման վրա յե, վոր, հասարակոր և սոցիալիզմի արտադրողական ուժերի հետագա զարգացումը:

Մեր խորհրդային պետությունը և խորհրդային իրավունքը, պաշտպանելով բաշխման բնագավառում սոցիալիզմի սկզբունքը՝ յուրաքանչյուրին՝ ըստ աշխատանքի, — սախալատրաստում ե

անցումը կոմունիստական սկզբունքի իրագործման, այն և յուրաքանչյուրին ըստ պահանջների:

Անհավասարությունը մարդկանց նյութական գրության մեջ գեռ գոյություն ունի սոցիալիզմի ժամանակ: Դա համբածանոթ փաստ է: Հենց սա ել արտահայտում և բուրժուական իրավունքի մնացորդները: Բուրժուական հասարակության մեջ այս անհավասարությունն արտահայտվում է նրանում, վոր կապիտալիստաները տիրում են արտադրության միջոցներին. սոցիալիստական հասարակության մեջ զա արտահայտվում է նրանում, վոր արտադրանքները բաշխվում են ըստ աշխատանքի քանակի և վորակի: Ցեղ ուրիշ մի սկզբունք սոցիալիզմի ժամանակ չկա և չի կարող լինել:

Իսկ կոմունիզմի ժամանակ ամեն մեկը հնարավորություն կունենա բավարարելու իր բոլոր պահանջներն անկախ աշխատանքի այն քանակից և վորակից, վոր առանձին մարդը տալու յի հասարակության:

Նշանակում ե, «բուրժուական» իրավունքի մնացորդները բաշխման բնագավառում «բուրժուական» են, նախ—այն իմաստով, վոր այդ սկզբունքը պատմականորեն ծագում ե համարժեք փոխանակման սկզբունքից, փոխանակման, վորը գոյացել և գեռելս բուրժուական հասարակության մեջ, յերկրորդ—վոր մարդկանց անհավասարությունն իրենց պահանջները բավարարելու հնարավորության իմաստով ձիւտ նույնպես ներկայացնում ե բուրժուական հասարակության մնացորդը:

Բայց պետությունն ու իրավունքը սոցիալիզմի ժամանակ իրենց զասակարգային, քաղաքական բովանդակությամբ և կողմանորոշումով սոցիալիստական են, նրանց մեջ բուրժուական կաթիլ անդամ չկա: Ընդհակառակին՝ պետության և իրավունքի ամբողջ ելությունը սոցիալիզմի շրջանում կայանում է նրանում, վորպեսդի վերջնականապես վոչնչացնի բոլոր և ամեն կարգի բուրժուական մնացորդները:

Իբրև լուսաբանություն կարելի յե բերել այլիսի որինակ: Մեր յերկրում վորոշ չափով գեռ գոյություն ունի քաղաքի և գյուղի հակագրություն: Սակայն վոչ վոք չի պնդիլ թե սեղմութ քաղաքի և գյուղի միջև հարաբերությունները բուրժուական են և կարգավորվում են բուրժուական իրավունքով, թեև քաղաքի և գյուղի միջև դեռևս գոյություն ունեցող տարրերությունը և նրա ստեղծած հակասությունը ներկայացնում են

բուրժուական հասարակության մնացորդ, կապիտալիզմի ժամանակ քաղաքի և գյուղի միջև գոյություն ունեցող յերեխնի անդընդի մնացորդ: Մատավոր և ֆիզիքական աշխատանքի միջև մեղմութեան գոյություն ունեցող հակադրությունը նույնպես հին, բուրժուական հասարակության մնացորդ է:

Մարքսի այն խոսքերը, թե սոցիալիզմը կրում է իր վրա հին հասարակության դրոշմը անտեսական, բարոյական և մտավոր տեսակետներից, ամբողջովին կիրառելի յն և մեր հասարակության վերաբերմամբ:

Սոցիալիզմը հազվանակեց և՛ քաղաքում և՛ գյուղում: Բայց տեղանոր գեռ մնացել են սպեկուլյանտական տարրեր, պահպանվել են անհատական գյուղացիական մնատեսություններ և արհեստավորներ, ջախջախված դասակարգերի բնելորները հուսահատ դիմադրություն են ցույց տալիս և կատաղի պատերազմ են մղում սոցիալիզմի գեմ:

Սոցիալիզմն ապահովեց ամբողջ ժողովրդի համար գիտություն, կուլտուրայի և արվեստի ծաղկումը, բայց գեռ կենդանի յեն կրոնական մնացորդները, տերտիենները, մոլլանները, բաբենները, ազանդավորները գեռ գործում են և թմրեցնում են մարդկանց գիտակցությունը:

Մարդկանց միջև ստեղծվել են նոր հարաբերություններ, բայց գեռ կենսունակ են մնացել նոր մնացորդները՝ սեփականատիրական հոգեբանության գարշելիությունը, անազնվությունը, խարդախությունը, անբարոյականությունը և այլն:

Եյս բոլորը ցույց են տալիս, վոր գեռ շարունակվում և նորի կոիվը հնի գեմ, վոր գեռ կենսունակ են անցյալի մնացորդները և նրանք համառ գիմագրություն են ցույց տալիս:

Մեծ ենք պետության ուժն ու նզորությունը: Մեր պետությունը հենվում է ամենալայն ժողովրդական մասսաների պաշտպանության վրա: Կապիտալիզմի մնացորդների գեմ մղվող պայքարում, ժողովրդի վկա թշնամիների, տրոցկիստական-բուխարինական, ճապոնա-գերմանական ֆաշիստական գործակաների գեմ մղվող պայքարում—սոցիալիստական պետությունը հենվում է ամբողջ ժողովրդի պաշտպանության վրա:

Սոցիալիստական իրավունքը ներկայացնում է այն հզոր գործիքը, վորը և հետագայում մահացու հարգածներ և տալու սոցիալիզմի թշնամիներին:

\* \* \*

Անհրաժեշտ եւ կանգ առնել այն դրության բնութագրի վրա, վորը գոյություն ունի խորհրդային սոցիալիստական իրավունքի հարցերի տեսական մշակման բնագավառում:

Այս բնագավառում գործող ժողովրդի թշնամիները կարողացան բավական վեստ հասցնել մեզ: Նրանք քարոզում ենին, և այն ել վոչ առանց հաջողության, մեր պետության մահացման, իրավունքի մահացման տեսությունը և առնասարար խորհրդային իրավունքի սոցիալիստական բնույթը չընդունելը:

Լայն ճակատով ծավալվում եր խորհրդային իրավունքի, իբրև գիտության, լի կ վիդացիան, ազագաղում եյին պետության և իրավունքի մարքսիստական ուսմունքի արմատական սկզբունքները:

Լիկվիդատորական այս աշխատանքը տարվում եր կեղծ հեղափոխական «ձախ» հայեցակետերի գրոշի տակ: Իրավունքի լիկվիդատորների փաստարկումը մոտավորապես հետեյան եր:

Քանի վոր բուրժուական գիտություն մեջ գոյություն ունի պետական իրավունք, ապա նա մեզ մոտ չպետք և գոյություն ունենա, վորովհետեւ...մեզ մոտ ամեն ինչ հակառակն է:

Բուրժուական գիտության մեջ գոյություն ունի քաղաքացիական իրավունք, իսկ մեզ մոտ նա չպետք և գոյություն ունենա, վոնովհետեւ...քաղաքացիական իրավունքն այնտեղ պաշտպանում և բուրժուազիայի շահերը, իսկ մեզ մոտ բուրժուազիա չկա:

Կամայականորեն, առանց մարքսիստական գիտության վորեւ սկզբունքի վրա հիմնավորելու, ստեղծվում եր ունիվերսալ «տնտեսական իրավունք»: Կազմվում եյին «գասընթացներ», «գասագրքեր», «աշխատություններ»՝ «անտեսական իրավունք»-ի, իբրև հանրապարփակ մի գիտություն, վորը փոխարինում եւ յենթարկում և իրեն իրավունքի բոլոր տեսակներն ու ձեերը:

Պետական իրավունքի գոյությունը մեզ մոտ—ժխտվում եր, չեր մշակվում: Նա լուսթյան եր մատնվում: Խորհրդային պետության սոցիալական բնույթը վորոշվում եր «անտեսական իրավունքով»:

Քաղաքացիական իրավունքն ել հավասարեցվում եր զերոյի: Նրան կամայականորեն թողնվում եյին միայն քաղաքացիների անձնական և գույքային իրավունքներն, ըստ վորում՝

տիրում եր այսպիսի տեսակետ, բուլժուական հասարակության մեջ քաղաքացիական իրավունքը, դա—հիմունքների հիմունքն ե, փորովնետե նա մասնավոր սեփականության իրավունքն ե. ԽՍՀ Միության մեջ չկա արտադրության միջոցների մասնավոր սեփականություն. չկա և քաղաքացիական իրավունք. վերջինս գոյություն ունի միայն այնքան, վորքան գոյություն ունի քաղաքացիների անձնական և գույքային իրավունք. Անա թե ինչ եր գրում այս կերպ դատող «մասնագետ»-ներից մեկը—Ֆ. Վոլֆ-սոնն իր «Քաղաքացիական իրավունքի դասագրքի» մեջ.

«Խորհրդային քաղաքացիական իրավունքը ծագեց նեղի հետ միաժամանակ, նրա այն ստադիայի հետ միասին, յերբ խորհրդային պետության խնդիրներից մեկը կազմում եր վորոշամանակաշրջանի ընթացքում անհատական տնտեսությունն ամրացնելը և մասնավոր անտեսական նախաձեռնությունն խրախուսելը... Անցման շրջանի հասարակական հարաբերությունների զարգացումն, ազգանշելով տնտեսության սոցիալիստական ձևերի աճը, նշում և ապրանքային հարաբերությունների ձևերի մահացումը, քաղաքացիական իրավունքի «մահացումը»:

Այս յեղրակացություններն այնքան պարզ են, վոր վոչ մի բացարություն չեն պահանջում:

Կրիլենկոյի խմբագրությամբ, «Յուրմինիմում» (այ քեզ իսկապես, ոռու լեզվի «հողմահարում») կոչվող դասագրքի մեջ քաղաքացիական իրավունքի մասին գրված ե. «Խորհրդային քաղաքացիական իրավունքը հիմնականում մենք գնահատում ենք իրեն անտեսական իրավունք»:

Հանդեցնել իրավունքի բոլոր տեսակները «տնտեսական իրավունքին», փաստորեն նշանակում ե հրաժարվել ընդհանրապես իրավունքի ուսումնասիրությունից:

Քաղաքացիական իրավունքը ԽՍՀ Միության մեջ պետք է ընդդրի քաղաքացիների վոչ միայն անձնական և գույքային իրավունքներն, այլ գլխավորապես, սոցիալիստական կարդի ընդհանուր տնտեսական հարաբերությունները. Քաղաքացիական իրավունքի միայն այսպիսի ըմբռնումով ե, վոր կարելի յե ճիշտ վճռել քաղաքացիների անձնական իրավունքների հարցը:

ԽՍՀ Միության աշխատավորների քաղաքացիական իրավունքը հիմունքը գանվում է վոչ թե անձնական, այլ հանրային սեփականության մեջ:

Ստիպված ես ուղղակի զարմանաբ թե Բնչակե կարող ելին

«մասնագետ»-ները հանդել քաղաքացիական իրավունքի լիկվիդացիայի մտքին:

Պետք և ամբողջությամբ վերականգնել խորհրդային սոցիալիստական քաղաքացիական իրավունքը, վորի հիմքը ինչպես այդ գրված և Սահմանադրության մեջ, հանրային սեփականությունն ե և պետք և տնտեսական իրավունքին վերադարձնել նրա խական իրավունքներն, այսինքն անտեսական ձևուարկ-ների պրակտիկայի նորմավորումն ու կարգավորումը:

Չե վոր պարզաբես հրեշավոր ե, նույնիսկ խորհրդային իրավունքի պրակտիկայի տեսակետից, տնտեսական իրավունքը հետեւալ կերպով վորոշելը. «Խորհրդային տնտեսական իրավունքը պրոլետարական պետության քաղաքականության հատուկ մի ձև ե սոցիալիստական արտադրության և խորհրդային առևտորի կաղմակերպման բնագավառում. նա պարզունակում ե իր մեջ աշխատավորների սոցիալիստական հասարակության տնտեսավարության և առորյայի հարցերի լուծումը. իսկ պետական, կոոպերատիվ, հասարակական կազմակերպությունների և առանձին աշխատավորների գույքային հարաբերությունների բնագավառում հեղափոխական սոցիալիստական որինականության կիրակումը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ նույն այդ քաղաքականության իրականացումը»:

Խորհրդային աշխատանքային իրավունքի բնագավառում մինչև վերջին ժամանակ տիրում եր տրոցկիստական տեսակետը: Խորհրդային աշխատանքային իրավունքից ողափող քաղաքացիներ համարվում ելին միայն պետական ձևուարկների բանվորներն ու ծառայողները, իսկ մեր յերկրի մնացած ամբողջ բնակչությունը, և առաջին հերթին գյուղացիությունը, իրավագետների տեսակետից, չեր համապատասխանում այն մարդկանց կատեգորիային, վորոնց վրա տարածվում ե խորհրդային աշխատանքային իրավունքը:

Տրոցկիստական այս անհեթեթության հիմնական տարածողն ե հանդիսանում չափից զուրս «բեղմնավոր» Զին. Դրիշինը: Դրիշնական այս թալմուդականը ուսուցանում ե, վոր «աշխատանքային իրավունքը ներկայացնում է պրոլետարական պետության քաղաքականության ձևը բանվորների և ծառայողների աշխատանքից կարգավորման և սոցիալիստական կազմակերպման բնագավառում» և իր «Խորհրդային աշխատանքային իրավունքը» դասագրքի մեջ մացնում ե հատուկ գլուխ՝ «Խորհրդային աշխատանքային իրա-

վունքի անգործադրելիությունը կոլտանասություններում» վերաբերում:

Յեվ արոցկիստական այս կոնտրաբանդը մինչև վերջին ժամանակ ավանդվում էր և այժմ և ավանդվում է մեր իրավաբանական ինստիտուտներում:

Զին. Դրիշինն առնասարակ ներկայացնում է ամեն տեսակ գոհեկության և մարքսիզմ-լենինիզմի թշնամական խեղաթյուրումների եժան տարածիչ:

Այսպիս, որինակ, ըստ Գրիշինի, սոցիալիստական և կապիտալիստական ձեռնարկություններում գոյություն ունի իրավունքի մի ձև, այն ե՛ բուրժուական իրավունք:

Ի՞նչ արժե, որինակ, նրա այսպիսի գատողությունը, «Աշխատանքային հարաբերությունների իրավական ձևի հետեւ, վորը պահում է իրավունքի բուրժուական ձևի մնացորդներ, — հետեւողական-սոցիալիստական տիպի ձեռնարկություններում թագնվում ե բոլորովին այլ բովանդակություն, քան մասնավոր ձեռնարկություններում և տնտեսություններում»:

Առնասարակ իրավական գրականությունը չափազանց ծանր տպավորություն և թողնում մարքսիստական գրագիտության տեսակետից:

Վորքան ել տխուր լինի, այնուամենայնիվ ստիպված ես խոստվանել, վոր համարյա ամբողջ մասնավիտական իրավական գրականությունը պետք և նորից ստեղծել:

Այս գրականության մեջ չափազանց խոր են արմատացել թշնամական և առնասարակ հակադիտական, հակամարքսիստական տեսությունները. նա չափազանց սլրիմիտիվ և աղքատ և և չի կարող ուսումնական և գիտական գրականություն լինելու հավակնություն ունենալ. Անհրաժեշտ է, վորպեսզի այս ամեն վոր, վորն լնդունակ և լրջորեն վերաբերվելու այս գործին, այժմ իսկ ձեռնամուխ լինի վերանայելու խորհրդային իրավունքի վերաբերմամբ ունեցած իր հին հայեցակետերը, վճռականորեն արմատախիլ անելով վասարարական տեսությունները և ստեղծելու իրավունքի այնպիսի մի ուսումնական գիտական գրականություն, վորը համապատասխանի մարքսիստական տեսության պահանջներին<sup>1</sup>:

Թարգմ. Ա. Պ. ՊՈՂՎՅԱՆ

<sup>1</sup> Ռուսերեն բնագիրը տես՝ «Социализм и Право» Պ. Юдин. «Большевик», 1937 թ. № 17. էջ 31—46:

## ԻՐԱՎԱԿԱՆ ՅԵՐԻԱՅՅԻ ՃԱԿԱՏԻ ԴՐՈՒՅՑԱՆ ՄԱՍԻՆ

### I

Մեր մեծ հայրենիքի աշխատավորների պայքարի և հաղթանականին գիւնանոցում պատվագոր տեղերից մեկը պատկանում է խորհրդային իրավունքին: Նա յեղել ե և մնում է սոցիալիզմի համար մզզող հեղափոխական պայքարի հզոր ուժը: Իրենց գոյության համարյա քանի տարվա ընթացքում խորհրդային գործները ծառայել են և ծառայում են իրեւ մի գործիք ձնշեռների մասնակի թշնամիներին, դաստիարակելու հասարակական գիսցիպիլինան: Բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետությունը բարձր և պահում հեղափոխական իրավունքի գործության անկայուներին, ամբաղնդելու պետական և հասարակական գիսցիպիլինան: Բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետությունը բարձր և պահում հեղափոխական իրավունքի գործության անկայուներին, ամբաղնդելու պետական և հասարակական գիսցիպիլինան:

Հասկմանալի յե, թե ինչ ահազին նշանակություն ունի իրավունքի մարքս-լենինյան տեսության տիրապետումը պրակտիկ աշխատանքների համար, վորոնք կոչված են իրագործելու պետականած կանգնած խնդիրները: Հասկանալի յե նույնպես, թե ինչ նշանակություն ունի խորհրդային իրավունքի ինչպես ընդհանուր, նույնպես և մասնավիտական պրոբլեմների մշակումը: Այսից հազիվ թե կտնվի տեսական հակատի մի այլ հատված, վորն այնքան հետամնաց, ամեն տեսակի կեղծ մարքսիստական, հակադիտական նեխվածքով ու հնտիով այնքան աղտոտված լինի, վորքան իրավական գիտությունների բնագավառը:

Մարքսիստագրարագետների կոնֆերանսում (1929 թ.) իրավատմական յելույթի մեջ ընկեր Ստալինը մերկացրեց մեր տեսական մտքի հետամնացությունն եկոնոմիկայի բնագավառում, ընդունակությունը, վոր տեսական միտքը «չի համառւմ» մեր գործնական հաջողությունների հետեւից, վոր «մենք վորոշ ձեղքվածք ունենք գործնական հաջողությունների և տեսական մտքի զարգացման միջև»:

Ընկիր Ստալինն այն ժամանակ մեր ուշաբըությունն եր հրավիրում այն հանդամանքի վրա, զոր «մեր հասարակական քաղաքական կյանքում տնտեսական հարցերի վերաբերմանը շրջանառություն ունեն վորոշ բուրժուական և մանր-բուրժուական տեսություններ», վորոնք աղոտում են մարդկանց գլուխները և չեն հանդիպում անհրաժեշտ գիմազբության:

Յեվ ընկեր Ստալինը հարցնում էր. «Ճի՞焚 գժվար և հասկաւ մաք վոր առանց բուրժուական տեսությունների դեմ ուղղված և մարքս-լինինյան տեսության բազայի վրա մղվող անհաշուելի պայքարի անկարելի յե ձեռք բերել կատարյալ հաղթանակ դասակարգային թշնամինների դեմ»:

Պետք եւ ասել, վոր վոմանց համար, սա, իսկապես, անհառ-  
կանալի յիշ և մնում եւ անհամականալի: Սրանով պետք եւ, խոշոր  
չափով, բացատրել մեր պայքարի անբավարարությունն այս  
տեսություններ»-ի գեմ, վորոնք, խոսնեավ ընկեր Ստալինի բառե-  
րով, ձեռք են բերել նախապաշտպունքների ամբություն մեր  
տեսական ճակատի մի շարք հատվածներում և, մասնավորապես  
ու առանձնապես, այս ճակատի իրավական հատվածում:

Յեվ իսկապէս, հազիվ թէ գտնվի տեսության մի այլ նույնքան հետամմաց, ամեն տեսակ կեղծ մարքսիստական, հակառակիտական նեխվածքով և հնոտիով աղոտաված բնագավառ, վորքան իրավունքի ընագավառ:

Հաղիվ թե վորե և մի այլ բնագավառում այնքան յերկարատես է այնքան անպատկաստ «զբանառություն ունենային», — ասենք, այժմ ևս շը ջանառություն ունեն, այնպիսի «թեորիա»-ներ և «թեորիկ»-ներ, վորոնք համակված են պետության և իրավունքի Մարդու իշխանության ու ուսմունքի կոպտառուն և նուազ առ առ մնեն թու Տառ.

Այստեղ, — թէ, այսպես կոչված, իքավունքի ընդհանուր տեսության ընազալվառում և թէ՝ առանձին, մասնավոր իքավական գիսցիպլինսերի (պետական իքավունքի, քաղաքացիական, քրեական, աշխատանքային, հողային և այլ իքավունքների) տեսության մեջ, կարելի յե հանդիպել բազմապիսի ուղղությունների, հոսանքների, ժիրանգների, հայեցակետերի ներկայացուցիչներին, վորոնց խոշոր մասը, վոչ միայն վորոնե ընդհանուր բան չունի մարքսիզմ-լենինիզմի հետ, թեև համառորեն քողարկվում են նրա անունով, այլ և ներկայացնում ե իրենից մեր գիտության կոպիտ մի կեղծարարություն, մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների և հիմնական վրույթիների կոպիտ խեղաթյուրում:

Մեր այս պնդման հշտությունն ապացուցելու համար բավական է նշել այն «աշխատությունները», վորոնք իր ժամանակին լայն «ըրջանառության» մեջ ելին. բավական է նշել այնպիսին «մարդուսաներին», ինչպես, որինակ պրոֆ. Գրյգիրարդին («Տնտեսական իրավունքը», «Պրոլետարիատը և իրավունքը» և այլն), պրոֆ. Ռեյներին («Իրավունք, մեր իրավունքը, ոտար իրավունքը», ընդհանուր իրավունքը), Իլինսկուն, Մատերովսկուն, Բաղումակուն, Աբժիսակովին և այլն, վորոնք խորհրդային յեղանակով անվերջ յերգում ելին պարիսպողիստների, նորմատիվիստների, ըստոր Պատրաժիցիկների, Կասպակերի, Դյուքիների, Կալնիերիների և այլն և այն բուրժուական տեսությունները:

Այս ճակատամասում յերկար ժամանակ գործուս եր այս  
մերկացված յերկերեսանի Պաշուկանիսը: Վերջին մի շաբք տա-  
րիների ընթացքում նա անկոնտրու տեր ու տնորեն եր Խոր-  
հրդային Շինարարության և Իրավունքի ինստիտուտում: Պետու-  
թյան և իրավունքի տեսության բնագավառում գիտական մտքի  
պեկալոր կենտրոնը լինելու, կոչված այս ինստիտուտը Պա-  
շուկանիսի և նրա արբանյակների ձեռքին ապաստարան դարձավ  
ժողովրդի թշնամիներից շատերի համար: Այստեղ շահատակում  
եյին այնպիսի փորձված տրոցկիստական յերկերեսանիներ, ինչ-  
պիս Զենիսը, Ազգագյանը, Դոցենիսն, Ստարովյանը և ուրիշները:

Պաշուկանիսն ու նրա արքանյակները բոլորի աշխատանքները հետագութական ինստիտուտը վերածել է եյխն մի գոմի, վորտեղ «Ժաղկում» եյխն ինստիտության և խմբակայնության զաղըելիքարքերը։ Իրենց համար անհաճո՞ւ և անհարմար աշխատողները գուրսու եյխն վանվում, ամրող աշխատանքը դարձել եր մենաշնորհ իրար սերտ կապված մարդկանց «արտել-ի» ինքնաքննադատության ձնշումը, շողոքութությունը, փոխադարձ գովարանումը, փոխադարձ ամիսիստիան վորեև մեկի սխալների մերկացման դեպքում, «վոժգիզմ»-ը՝ սրանք բոլորն իրենց համար փարթամ բռն եյխն դրել այստեղ։ Իրավունքի աեսության ճակատի անբարեհաջող դրության մասին կուսակցական մամուլի բազմանվագ ազգանշանները մնում եյխն անհետեանք։ Դրան նպաստում եր այն, վոր իրավագետ-կոմունիստների մոտ բացակայում եր զգանությունը։

իրենց մնասարարական աշխատանքն իրավունքական գիտչպահունակի բնագավառում Պաշտուածնիօն ու նրա արքանյակները տանում եյին բավական նուրբ կերպով: Այս մարզիկ բազմից խոստովանում եյին իրենց սխալները, բայց միայն նրա համար, փոր-

պեսզի ավելի քողարկված ձևով շարունակեցին իրենց կեղծ մարք-սիստական, հակալնինյան հայացակետների քարոզը: Նրանց «գիտական» գործունեյությունն ուղղված եր այն բանին, վորպեսզի ամեն կերպ կասեցնեցին իրավական դիսցիլինների զարգացումը, վորպեսզի անվանարկեցին և քայլքայեցին խորհրդացյին իրավական դիտությունը:

Քննադատության կրակի տակ նահանջելով մի աստիճանից մյուսը, նրանք տարբեր ձեռքով քարոզում եյին պետության և իրավունքի մահացման հակակուսակցական, վասարարական «թեուրիաները»: Զինաթափել բանվոր դասակարգը նրա թշնամիների առաջ, թուլացնել սոցիալիզմի պետական հոգորությունը՝ սա յերայս փորձների նպատակը: Ուսանող յերիտասարդության, — աճող կաղըերին՝ նրանք ներշնչում եյին սիհիլիստական վերաբերմունք դեպի խորհրդացյին իրավունքը: Սա միևնույն չափով վերաբերվում է ինչպես իրավունքի ընդհանուր տեսության, այնպես և առանձին իրավական դիսցիլիններին (պետական, քաղաքացիական, աշխատանքային, հողային և այլ իրավունքներին):

Պաշուկանիսի և նրա խմբի կեղծ գիտական դիրքերը միահյունվում եյին արցոկիզմի և աջերի սեստավրատորական «թեուրիաներին» (առանձնապես Բուխարինի հակալենինյան հայացքներին): Պաշուկանիսի և նրա ընկերության լիկվիդատորական «թեուրիաների» ակունքներն այն ալգյուն ախոռներումն եյին, վորտեղ և ինսերնացիոնալի մենշևիկյան տեսաբանները զոհենկացնում և խեղաթյուրում են մարքումը: Այս բոլորը քողարկվում եր բուրժուական իրավագիտության քննադատության վերաբերող մեծագորդ բառերով, բանավոր յերգումների աղմուկով և վորոտով իսկ իրականում սիստեմատիկաբար անց եր կացվում բուրժուական սեստավրատորական, արոցիկստական-բուխարինական կոնտրաբանդը: «Մեթոդոլոգիական կինարունը», ինչպես մեծարում եյին իրենց «արտել»-ը Պաշուկանիսն ու նրա արբանյակները, թեև խոսքով գուրս եր գալիս բուրժուական տեսությունների և նրանց կրողների գեմ խորհրդացյին հողի վրա, բայց իրականում շարունակում եր մարքսիզմը խեղաթյուրելու նույն այն գիծը, վորը, խորհրդացյին իշխանության առաջին տարիներից սկսած անց եյին կայնում բուրժուական և մենշևիկյան իրավաբանները, Պետրաժիցկու, Կոստազի, Դյուգիի, Ռենների և այլոց ջերմ հետեւրդները:

Այդ պատճառով եր վորպեսզի հարավոր լինի խորանալ-

մինչև Պաշուկանիսի և նրա «շկոլկայի» կողմից մարքսիզմ-լենինիզմը խեղաթյուրելու արժանակարը, անհրաժեշտ ե, թեկուզ ընդհանուր գծերով, վերականգնել հիշողության մեջ իրավունքի այն հակագծերով, վերականգնել հիշողության մեջ իրավունքի այն հակագծերով, վորոնք շրջանառություն ուժարքսիստական տեսությունները, վորոնք շրջանառություն առաջին տարիներին: Նեյին պրոլետարական հնդավոխության առաջին տարիներին:

## II

Իրավագիտական կաղըերն այս ժամանակ չափազանց փոքրաթիվ եյին: Ոգտվելով այս հանգամանքից, բուրժուական պլրոքիսորները, վորոնք վաղ յերիտասարդության շըրշանում իրենց տուրքն եյին տվել «Եգալ մարքսիզմին», ինչպես նաև մենշևիկյան իրավաբանները, հանդես եյին գալիս իրենց հաստափոր գրքերով, վորոնք լի եյին մարքսիզմի ամենասահարձակ խեղաթյուրություններով: Երանց գործունեյությունն առանձնարձակ խեղաթյուրություններում էր աշխատավառներում սկսեցին նկատվել բուրժուական իդեոլոգիայի վերածնության փորձերը:

Այս «մարքսիստ»-ներից ամեն մեկն ուներ իր «ուսուցիչ»-ը մոլի բուրժուական զիտնականների շարքում: Այդ ուսուցիչների վոգով եւ իրենց ուժերի չափ, «աշակերտաները» մշակում եյին վորով և իրենց ուժում իրեն իրավունքի մարքս-լենինյան տեսություն: Հին մենշևիկ Գոյլիբարդը զովաբանում եր Կարլ Բեննեթյուն: Հին մենշևիկ Պայլիստ և բողոքանովական պրոֆ. Ռեյմսերը գովում եր ինապելին և Պետրաժիցկուն:

Բուրժուական այս ջատագովությունը Խորհրդացյին իրավունքի հարցերի նկատմամբ զարգելի հետեւնքներ եր տալիս: Հետաքրքրական ե, վոր այդ կարգի ամենից ավելի թունդ հետեւ վանքները հաճախ հանդես եյին գալիս իրը թե «Ճախ» ֆրազների թագանթով պարուրված:

Դեռ 1923 թ. պրոֆ. Գոյլիբարդը գրում եր «հակա-իրավական պրոպագանդ»-ի մասին՝ իրեկ խորհրդացյին արդարադատության կարևորագույն խնդիրներից մեկի մասին և անմիջական կոչ եր անում գրուել իրավունքի գեմ, — բուրժուական, թե խորհրդացյին իրավունքի գեմ, գիտական պրոֆեսորը չեր բաշխություն այդ...—կոչ եր անում գրուել ընդհանրապես իրավունքի դեմ:

իր, գժբախտաբար, բազմաթիվ գրքերից մեկում գիտնական այս մարդը բառացի կորեն, հետեւյան եր գրում.—«Ամեն մի գիտակից պրոլետար ներկայումս գիտե կամ, համենայն դեպս, հաղար անդամ լսել ե, վոր կրօնը—ոպիում և ժողովրդի համար. բայց, ինձ թվում ե, շատ քչերն են, վորոնք գիտակցում են, վոր իրավունքն՝ ել ավելի թունավորիչ և թմրեցնող ոպիում և նույն այդ ժողովրդի համար...» («Մասնավոր գույքային իրավունքի հիմունքները». 1924 թ.).

Հասարակական գիտությունների սոցիալիստական Ակադեմիայի և Արդարադատության ֆողովրդական Կոմիսարիատի մարկայի տակ մենշեփեյան այս անսքող տեսաբանը բուրժուական իրակարգի տարբերությունը սոցիալիստականից գտնում եր նրանում, վոր «բուրժուական տիրապետության տաճարը՝ որենսդըրությունն ե, և նրա ֆետիշն՝ որենքը. պրոլետարական և սոցիալիստական համաշխարհային իրակարգի տաճարը՝ կառավարումն ե, իսկ նրա պատարագը՝ աշխատանքը»:

Համատեղելով իրավունքի պրոֆեսորի պաշտոնը ՌԽՖՍՀ Արդարադատության ֆողովրդական Կոմիսարիատի կոլեգիայի անդամի պաշտոնին, պրոֆ. Գոյխարդը զմայլանքով մնջերումներ եր անում Դյուգիից, Վիլսոնից և Ռենդիից, հանգիստ խըդանով գուրս եր նետում պրոլետարական պետության դինանոցից որենքն ու իրավունքը իրեն բուրժուական հնումի, իրեն «ոպիում» իրեն «բուրժուական մնացուկ», իրեն մի գաղափար, վորը ծառայում և շահագործող գասակարգի շահերին,,

Գոյխարդին ձայնակցում եր պրոֆ. Ռեյնսերը: 1925 թվականին իր «աշխատություններից» մեկում նա տարակուսանքով բացականչում ե. «...Այսպիսով մենք մինչեւ այժմ ել չըդիտենք, թե հարկավոր ե, արդյոք, մեղ իրավունքը, վմրչափով և նա հարկավոր մեղ և կարելի յե, արդյոք, հաշտվել այն դրության հետ, վոր մենք, չըդիտես ինչնեւ, պրոլետարական դիկտուրան և գասակարգային շահը վերաներկում՝ վերածում ենք ինչ վոր առեղծվածային իրավական պատկերների և ձեւրի»:

Խճողվելով պրոլետարիատի դիկտուրայի և իրավունքի փոխարքերակցությունների հարցում, պրոֆ. Ռեյնսերը հանդավայն յեղակացության, վորի համաձայն նա պարզորեն ժխտում

է, թե հսարակոր և ոգտագործել իրավունքը, իրեն հեղափոխական գործիք խորհրդային պետության ձեռքին:

«Հեղափոխությունից առաջ,—դրում եր նա, —յես կարծում եյի, վոր իրավունքը մենք կիարողանայինք ոգտագործել իրեն հեղափոխական գենքը: Ներկայումս, նոր տնտեսական քաղաքականության և համաշխարհային հեղափոխության դաշտաղման առկայության պայմաններում, յես հակվում եմ կանգնելու հակդիր տեսակետի վրա»:

Յեղ այնուհետև նա շարունակում ե. «Իրավունքը, յեթե անգամ «ոպիում չե ժողովրդի համար», սակայն նա, համենայն գեպս, մի վտանգավոր գեղանյութ ե, վորն իր տաք վիճակում պայթուցիկ նյութի հատկություն ունի, իսկ սառը վիճակում՝ ամուր, յերեխն չափազանց ամուր սունձի կամ մածիկի բոլոր հատկանիշները»<sup>1</sup>:

Խորհրդային իրավունքի հեղափոխական հատկությունների յերկուղ («պայթուցիկ նյութի» հատկություն) և խորհրդային որենքի ու խորհրդային իրավունքի անգին կազմակերպիչ զերի ժխտում սոցիալիստական շինարարության պրոցեսում՝ ահա թե ինչով են ընորոշվում Ռեյնսերի, Գոյխարդի և նմանների բուրժուական-մենշեփեյան գիրքերը:

1922 թվի Ռեյնսերի (թ) և XI համագումարում լենինն ասում եր, վոր, «քաղաքականության վիրաբերյալ մեր պատկերացումները հասարակ բանվորին և զյուղացւուն մենք միանգամբից տալիս եյինք գեկրտաների ձեռվ» (հ. XXVII եջ 341), և, դրանով իսկ, նա ընդգծում եր ընդհանրապես խորհրդային, սոցիալիստական որինականության և խորհրդային իրավունքի վիթխարի կազմակերպող նշանակությունը: Համառուսական կենտրոնացման IV նըստաշրջանում լենինը խոսում եր առաջին խորհրդային աշխատանքային որենքների կողեկանի մասին, վորն որենսդրական կարգով սահմանեց ութիւնյա բանվորական որ, իրեն խորհրդային իշխանության անգին նվաճման մասին, իսկ այսպիսի որենքների մասին, ինչպիսին նողային գեկրետը, նա սոսում եր, վոր նրանց հրատարակումով մենք ապահովեցինք գյուղացու դաշինքը բանվորի հետ (հ. XXVII. եջ 427—429): Լենինը և Ստալինը յեռանդրին պաշտպանում եյին միասնական որինականության գաղափարն ամբողջ ֆեդերացիայում, վոչ թե «Կալուգայի» կամ «Կազանի»:

<sup>1</sup> Նույնը, եջ 35:

<sup>1</sup> М. Рейнснер. „Право, наше право, чужое право, общее право“ եջ 34:

այլ պատմական համառուսական և նույնիսկ «խորհրդային հանրապետությունների ամբողջ ֆեդերացիայի համար» միասնական որինականության դադարարը (հ. XXVII, էջ 399—400): Իսկ Ռեյների և Գոյլբարդի տիպի «ամրաքիստ»-ները աղոտում եյին ընթերցողների գլուխները խորհրդային իրավունքի, իբր «ոպիտմի», իբրև «գտանգավոր գեղանյութի», վիթած, հակալենինշյան «տեսություններով» և, այսպիսով, ժխտում եյին նրա նշանակությունն, ոգուտը և անհրաժեշտությունն աշխատավորների պայքարում ընդում շահագործողների:

Իսկ յերբ այս «գիտնականներն», այնուամենայնիվ ստիպված եյին լինում խորհրդային իրավունքի անալիզին զիմելու, նրանք համում եյին այնպիսի հրեշավոր անմտությունների, վորոնց տպագրումը կարելի յէ բացատրել միայն հրատարակիչների բացառիկ անհոգությամբ դեռի մարքս-լինինյան տեսությունը, նրանց տգիտությամբ կամ ուղղակի թշնամանքով լինենի վերաբերմամբ:

Իբրև որինակ իրավունքի լենինյան-ստալինյան ուսմունքի կոպագույն խեղաթյուրումների կարելի յէ սերել նույն Ռեյների «թերթիան», վորը վորոշում եր իրավունքն ընդհանուրապես, իբրև «ինտուիտիվ» իրավունքը, իբրև «գիտակցության» ձեւ, իբրև «զգացումների կոմպլեքս»: Պրոֆ. Ռեյները կանգնած է Մայիս-Ավոնարիուսի-Յովգանովի գիրքերի վրա, նենգավոխելով մարքսիզմնինիզմը մախիզմով, մատերիալիզմն ու մատերիալիստական դիալեկտիկան՝ իդեալիզմով և այն ել նրա ամենահիտագի և իրավաբամիս տեսակներից մեջի ձեռով:

Հստ պրոֆ. Ռեյների, իրավունքը՝ կոմպրոմիս և գասակարգերի միջև: «Իրավունքի ամեն մի սխամեմ...կոմպրոմիս և, վորը կազմված և ամենատարբեր դասակարգային գաղափարների իդեոլոգիական բեկորներից, նա խայտարգիտ մի հյուսվածք և, վորը ստեղծվել և ամենատարբեր հասարակական դասակարգերի իրավական պահանջների և հայացքների հիման վրա»:

Այսպես և գրում պրոֆ. Ռեյները, հրամցնելով այս հականինյան անհեթեթությունն իբրև մարքսիզմ, իբրև իրավունքի գիտության վերջին խոսք:

Մարքսիզմ-լենինիզմն ուսուցանում է, վոր իրավունքը «դասակարգի» որևէնքի վերածված կամքն և միայն»: Հստ Ռեյների՝ իրավունքը տարբեր դասակարգերի «իդեոլոգիական բեկորների» մի կույտ է:

Մարքսիզմ-լենինիզմն ուսուցանում է, վոր «պայքարող ամեն մի կուսակցություն (հետևարար ամեն մի դասակարգ Ա. Վիշ.) իր հավակնությունները պետք եւ ձևակերպի իր ծրագրի մեջ իբրև իրավական պահանջներ»: Բայ Ռեյների, իրավունքի սիստեմը մի «խայտարգիտ հյուսվածք» է, վորը ստեղծվել է «ամենատարբեր հասարակական դասակարգերի իրավական պահանջների և հայացքների հիման վրա...»:

Եւնկելով այս, բացարձակապես սխալ, վնասակար, հակամարքսիստական և կեղծ գիտական հայացքներից, պրոֆ. Ռեյները հանգավ խորհրդային իրավունքի՝ իբրև կոմպրոմիսային իրավունքի, իբրև «խաղաղացման» և հաշտեցման» իրավունքի գաղափարին: Պրոֆ. Ռեյներն այնուել հասավ, վոր խորհրդային իրավունքը նա ներկայացրեց իբրև մի իրավունք, վորի կազմի մեջ «զաշինքի հիմունքներով» մտել են գյուղացիական իրավունքը և «համբերատարության ու կոմպրոմիսի հիմունքներով» բուրժուական իրավունքը:

Բայ պրոֆ. Ռեյների, խորհրդային իրավունքը՝ «յեռմիասնական իրավունք և, պրոլետարական, գյուղացիական և բուրժուական, և այս, ամոթ չինի ասել սիստեմի մեջ, տիրապետող գերը գրավում և պրոլետարական իրավունքը...»

Զարմանալի չե, վոր խորհրդային իրավունքի մեջ պրոֆ. Ռեյները տեսնում է նրա՝ ունակցիոն ուժի վերածվելու վտանգ, ունակցիոն ուժի, վորն ընդունակ և ջլատելու սոցիալիզմի համար մղվող պայքարի հաջողությունները:

Պրոֆ. Ռեյները բառացիորեն գրում եր հետեյալը:

«Մեր պայմանների շրջանակներում իրավունքը խաղաղացման և հաշտեցման մի անազին ասպարատ» և, վորը հնարավոր և զարձնում պրոլետարիատի գիլտատառությունը խոչըր և մանր-կապիտալիստական շրջապատում, վերջինս ինչպես ներքին, նույնպես և արտաքին արտահայտության մեջ, բայց, մյուս կողմից, մի ենույն իրավունքը կարող եւ դառնալ ունակցիոն ուժ, վորը կվագերացնի, կամը ալը նորի անցման ժամանակաշրջանը նրա նեպական ձևով իրական ամեն՝ կարգի անհրաժեշտությունից անդամական դաշտությունից ավելի մեծ չափով, լայն անպարեզ կբանաբուժությունից ամառ այսպարագությունից մի ծագալով, վորը կարող է լուրջ վնաս հասցնել պրոլետարական շահին և զրանով նա կամ կղանդաղեցնի

կոմունիստական հասարակության մեջ «ներածելու» ընթացքը, կամ անհրաժեշտ կդարձնի նոր հեղափոխություն՝ աղառելու պրոլետարիատին այն բուրժուական ցանցերից, վորոնք աննկատելի կերպով սեղմել են նրան։

Այսպիսով, ըստ Իեյսների, գուրս և գալիս, վոր 1) խորհրդային իրավունքը «խաղաղացնում և հաշտեցնում ե» կովող դասակարգերին և 2) փրկում ե պրոլետարական դիկտատուրան «խոշոր և մանր կապիտալիստական շրջապատի» մշման հետեանքով սպառնող խորտակումից։ Սրանում պլոփ. Իեյսները տեսնում է խորհրդային իրավունքի դրական կողմը։ Բայց խորհրդային իրավունքը «ուսիկ» և անում ռեակցիոն ուժ դառնալու, «պրոլետարական շահին վնասելու, կոմունիստական հասարակության մեջ ներածելու»<sup>(\*)</sup> ընթացքը գանգաղեցնելու և նույնիսկ ինչ վոր մի նոր «հեղափոխության» հասցնելու<sup>(\*)</sup>։ Սա՝ խորհրդային իրավունքի բացասական կողմն ե։

Զակազանց բնորոշ և Իեյսների այս հայտնությունը։ Նա ցույց ե տալիս իրավունքի բուրժուական և մենշևիկյան կոնցեպցիաների սերտ կազմ և միահյուսումը հականեղափոխական արոց կիստական այն զրապարտության, վորը վերաբերում է խորհրդային պետության «այլասերման», «յերրորդ հեղափոխության» և այն։

Փոյխբարդի և Իեյսների տիպի վոչ-բարով տեսարանները վորոշ ժամանակ անպատիժ կերպով քարոզում եյին իրենց այս բուրժուական-շատագովական բանդազուշանքը։ Խորհրդային իրավունքի գեմ ուղղված նրանց զրպարտությունը չեր հանդիպում հականարվածի։ Ամեն կարգի բուրժուական իդեոլոգիաների քարոզիչներն անարգել կերպով խեղաթյուրում և աղճատում եյին խորհրդային իրավունքի բովանդակությունը, նրա խսկական եյությունը, նրա դերն ու նշանակությունը պրոլետարական հեղափոխության և սոցիալիստական շինարարության մեջ։

Այս խեղաթյուրումներով նրանք քիչ վաստ չպատճառեցին սոցիալիզմի գործին, պատվաստելով յուրատեսակ մի «իրավական նիհիլիզմ», անվանարկելով խորհրդային իրավունքն ու խորհրդային որենքները, խլելով պրոլետարիատի ձեռքից նրա դասակարգային պայքարի այս սուր գենքը…

### III

Խորհրդային իրավունքի պատմության մեջ ականափոր տեղ է գրավում Պ. Ի. Ստոչկան, վորի անվան հետ կապված են խոր-

հըրդային արդարատատության կազմակերպման առաջին քայլերը և դատարանին վերաբերող առաջին դեկրետների ծնունդը։

Քիչ բան չի արել Պ. Ի. Ստոչկան խորհրդային իրավունքի պետականական գերի պրոպագանդի համար, խորհրդային պետականական իրավունքի հիմունքների մշակման հական և քաղաքացիական իրավունքի հիմունքների մշակման համար։ Նա նշանակալից ծառայություն և մատուցել մի շարք իրամար։ Վական պրոբլեմներ մարքս-լենինյան վոգով մշակելու գործում։ Վական պրոբլեմներ մարքս-լենինյան վոգով մշակելու գործում։ Նույնականից ենրա ծառայությունը նաև այն պայքարում, վորը մղվում եր խորհրդային իրավունքի մարքսիստական լենինյան ըմբռնման համար, ըստ վորում խորհրդային իրավունքների սխալների սխալները, հակառակ գաղափար են տալիս խորհրդային իրավունքի մարքս-լենինյան պատահայությունն ե, վորը, գաղափար գաղափարի արտահայտությունն ե, վորը գրանցված և խորհրդային պետական որենքների մեջ։ Բուրբականց գաղափարը պատահայությունն ենրա վարած պայքարում ժողովական պահանջման մեջ որերը։

Յեվ այնուամենայնիվ, նրա աշխատությունների մեջ գոյություն ունեն մի շարք սխալներ, հակառակներ և գրոյթներ, վորոնք աղճատված գաղափար են տալիս խորհրդային իրավունքի եյության և նշանակության մասին սոցիալիզմի ժամանակաշրջանում։

Այսպես Պ. Ի. Ստոչկան, խոսելով «պրոլետարական իրավունքի» մասին, իրեւ անցման ժամանակաշրջանի իրավունքի մասին, պնդում եր, վոր պրոլետարական դիկտատուրայի կամ մասին, սոցիալիզմի հասարակության ժամանակաշրջանում «մարդու սոցիալիստական» հասարակության ժամանակաշրջանում և այլուր կանց փոխարարելությունները, սոցիալական կարգը կկարգավորելուն վոչ հարկադրանքի միջոցով, այլ աշխատավորների, այսինքն վեն վոչ թե հարկադրանքի միջոցով, այլ աշխատավորների, այսինքն ամբողջ նոր հասարակության գիտակցական բարի կամքույթ։

Դա ուղղակի հակասում է պետության և իրավունքի մարքսատական-լենինյան ուսմունքին։

Լենինը գրում եր. «Յեթև մենք անարխիստներ չենք, մենք պետք ե ընդունենք պետության, այսինքն հարկադրանքի ան-պետքեցառությունը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու համար հրաժեշտությունը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու համար (XXI, եջ 602)։ Նա ընդգծում եր, վոր՝ «իրավունքը վոչինչ ե առանց այն ապարատի, վորն ընդունակ է հարկադրելու, պրակտիկական պահանջման վերաբերությունը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու համար» (Տ. XXI, ց. 438)։

Ստալինն ուսուցանում է, վոր՝ «մեր ժամանակի հեղափոխական որինականությունն իր սուր ծայրով ուղղված է վոչ թե խական որինականությունն իր սուր ծայրով ուղղված է վոչ թե

<sup>1</sup> П. Стучка, 13 лет борьбы за революционно-марксистскую теорию права, стр. 24.

ռազմական կոմունիզմի ծայրահեղությունների դեմ, վորոնք վագուց արդեն գոյություն չունեն բնության մեջ, այլ ուղղված են հանրային տնտեսության մեջ գոյություն ունեցող գողերի և ֆասարարների դեմ...»<sup>1</sup>:

Անցման շրջանի «սոցիալական կարգի» կարգավորումը մարքսիզմ-լենինիզմն, այսպիսով, պատկերացնում է իրեն վոչ միայն ռազմական մեջ միջնորդով, ինչպես կարծում եր Ստուչկան, այլև հարկադրանքի միջնորդ:

Պ. Ի. Ստուչկան ուներ և այլ սխալներ, վորոնք խանգարում եին նրան ճիշտ հասկանալու խորհրդային իրավունքի եյությունն ու նրա զարգացման ուղիները: Այսպես, նա պնդում եր, վոր՝ «մեկ մոտ արգեն գժվար ե դառնում խիստ պարզորոշ սահմանագիծ անցկացնել իրավունքի և տեխնիկայի միջև», վոր՝ «մեկը վերածվում ե մյուսի», վոր՝ «մենք (պրոլետարական հեղափոխության) ամբողջ առաջին շրջանը ապրում ելինք համարյա առանց որևէնքների»: Այսուենեաւ, նա առաջ եր մզում այն հիմնովին սխալ թեղը, վոր իրը թե խորհրդային պետության մեջ մահանում ե իրավունքի և պարտականության հակադրությունը:

ԽՍՀՄ Նոր Սահմանադրությունն ուղղակի սահմանադում ե իրավունքներն ու պարտականությունները: Նորհրդային որենքների ամբողջ արգարությամբ և նրանց ամբողջ խստությամբ մենք պատճում ենք մարդանց իրենց պարտականությունները խախտելու համար: Բայց վոչ վոքի մտքովը չի անցնի պատճել վորեւ մեկին նրա համար, վոր նա չի ոգտագործել իր այս կամ այն իրավունքը...

Մերկացնելով Պաշտկանիս հակամարքսիստական այն պընդումը, թե իրավունքը ներկայացնում է ապրանքատերերի, մասնավորշահերն անջատ կրողների հարաբերությունների սպեցիֆիկ ձեր, Պ. Ի. Ստուչկան ինքն ընկնում եր կոպիտ սխալների մեջ: Նոր արնատեսական քաղաքականության շրջանի մեր իրավունքը նա հայտարում եր բուրժուական, սխալով, վոր մենք պարզիպարզո «կատարել ենք բուրժուական իրավունքի ռեցեպցիա, փոխառութիւն»:

Խորհրդային Քաղաքացիական կողեքսի մեջ Պ. Ի. Ստուչկան տեսնում ե, խոսելով նրա բառերով, պահանջն ու առաջարկը միջնորդավորող նույն «ավտոմատը», վորպիսին ներկայացնում ե բուրժուական քաղաքացիական կողեքսը: Մեր Քաղաքացիական

կողեքսն ընկ. Ստուչկան համարում է՝ «Նյութերի հասարակական փոխանակումը միջնորդավորելու մի ձև, վորն իրացվում է առևտուրի միջոցով»: Մեր Քաղաքացիական կողեքսի ամբողջ տարբերությունը բուրժուական քաղաքացիական կողեքսից ընկ. Ստուչկան տեսնում է նրանում, վոր մեղ մոտ՝ «Նիկոս և խրվում նոր մոմենտ՝ սոցիալիստական պլանայնությունը»: («Կորց советского гражданскоого процесса», ч. I, стр. 73):

Պլանայնության նշումը, ուսկայն, չի փոխում գործը, վորովհետեւ ընկ. Ստուչկայի հիմնական սխալն այն ե, վոր քաղաքացիական իրավունքը նա հանդիցնում է արտադրության և փոխանակման սփերային: Բայց ինչ անել այս գեղքում քաղաքացիական իրավունքի այն մասի հետ, վորը կարգավորվեն «սոցիալիստական բարերություններն ևս պետք ե կարգավորվեն «սոցիալիստական պլանայնության անօակենտրց»: Պարզ ե, վոր քաղաքացիական իրավունքը ընդուրելում է հարաբերությունների ավելի լայն սփերա, քան միայն փոխանակման հարաբերությունները (ինչպես կարծում ե Պաշուկանիսը), կամ նույնիսկ միայն արտադրության և փոխանակման հարաբերությունները (ինչպես սխալ կերպով մտածում եր Ստուչկան):

Այս տեսակետի մեջ վոյություն ունեն Պ. Ի. Ստուչկայի «թերիայի» անկամակածելի կապն ու ազգակցությունը Պաշուկանիսի «թերիայի» հետ: Իզուր չե, վոր ընկ. Ստուչկան ամեն կերպ գովաբանում է Պաշուկանիսի «թերիավունքի ընդհանուր տեսությունն ու մարքսիզմը» մասսարական գրքույկը և սբրապծությամբ նրա անունը դնում է Մարքսի, Ենգելիսի, Լինինի անունների կողքին («Революционная роль советского права», стр. 96):

Խորհրդային Քաղաքացիական իրավունքը և խորհրդային Քաղաքացիական կողեքմն ընկ. Ստուչկան հիմնականում ընութագրում ե իրեւ բուրժուական յերեւյթներ:

Նոր անտեսական քաղաքականության շրջանի մեր իրավունքն ընկ. Ստուչկան ուղղակի հայտարարում է իրեւ բուրժուական, պնդելով, վոր մենք պարզիպարզո «կատարել ենք բուրժուական իրավունքի ռեցեպցիա, փոխառութիւն»:

Մեր նոր, (ե, այստեղ ել ասենք, մեր առաջին) կողեքմները ընկ. Ստուչկան դիտում է իրեւ «բուրժուական իրավունքին արված զիջումների արդյունք, իրեւ «նահանջմի ուղինիշներ» ե, այսպիսով, նա կրկնում է Զինովեի-Բուխարինի հակալենինյան հեր-

<sup>1</sup> Ստալին. «Լենինիզմի հարցերը»: Հայկուսհրատ. 1935 թ. եջ 631:

յուրանքները և իրավունքի տեսության բնագավառը փոխադրում է արողիքստական-դինովնական դրույթները:

Բայց ինքը Պ. Ի. Ստոչկան «Խորհրդային իրավունքի հեղափոխական դերը» գրքույշի մեջ գրում եր այն մասին, վորնրան, ընկերների աշխացությամբ, հաջողվեց տալ քաղաքացիական իրավունքի, — ընդհանրապես, — և մեր, խորհրդայինի, — մասնավորապես, — նոր, հեղափոխական-դիմակալուկական կոնցեսցիա:

Իբրև պարզաբանություն վերոհիշյալ մեջը բրումի պետք է ասել վոր այս «նոր հեղափոխական-դիմակալուկական կոնցեսցիայի» հետ կազմած հարցերից մեկն ել ներկայացնում եր այսպես կոչված, տնտեսական-վարչական կամ, ինչպես հետագայում սկսեցին անվանել, տնտեսական իրավունքի առանձնացումն իբրև իրավունքի հատուկ մի ճյուղ (տես «Խորհրդային տնտեսական իրավունքի դասընթացք», Կոմակադեմիայի Խորհրդային շնչարաբության և իրավունքի ինստիտուտ, 1935 թ. հեղինակներ՝ Գինցբուրգ, Ամֆիթեատրով, Կոստելցե): Իր արմատներով այս «տնտեսական իրավունքը» հարակցում և Պաշտկանիսի փթած վասարարական տեսության, նրա գլխավորած վերոհիշյալ ինստիտուտի վասարարական աշխատանքին:

Այս տնտեսական-վարչական իրավունքի մեջ հիմնական մոմենտը հանգում եր նրան, վոր, — «տնտեսական հարաբերությունները կարգավորող խորհրդային իրավունքը հատվում է յերկու «իրավունքի», մեկը՝ քաղաքացիական, այն եւ պետական որդանների և մասնավոր անձանց միջև տեղի ունեցող հարաբերությունների, ինչպես նաև մասնավոր անձանց փոխհարաբերությունների համար, մյուսը՝ պետական կամ սոցիալիստական սեկտորի ներսում կատարվող հարաբերությունների համար»:

Խոսելով վարչատնտեսական իրավունքի բովանդակության մասին, ընկ. Ստոչկան գրում եր, վոր իրավունքի այս բնագավառը կարգավորում է «սոցիալիստական սեկտորի տնտեսական հարաբերությունները, մինչդեռ մասնավոր տնտեսական կամ քաղաքացիական (նույնը մասնավոր) իրավունքը կարգավորում ե, գլխավորապես, մասնավոր սեփականատերերի և մասամբ միջսեկտորային հարաբերությունները», («Դասընթացք Խորհրդային քաղաքացիական իրավունքի», մ. III հջ 10):

Հստ վորում ընկ. Ստոչկան պարզաբանում եր, վոր այդ յերկու «իրավունքների» տարբերությունը կայանում է նրանում, վոր առաջինը բնորոշվում է իր պլանային բնույթով, իսկ յերկ-

